ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 9 *Общественные науки*

Վ. Ռուսուն

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼԻԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայտնի իրողություն է, որ XIX դարի երկրորդ կեսի հայ բոլոր հասարակական հոսանքների ժամուլում հաճախ հյուրընկալվում էին հոդվածներ, որոնց մեջ պաշտպանած դաղափարները շատ էական հարցերում չէին զուգադիպում տվյալ հոսանքի ընդհանուր քաղաքական-հասարակական ուղղությանը։ Ավելին, այս կամ այն հոսանքին պատկանող թերթում տարիներ շարունակ գրում էին մարդիկ, որոնց ոչ մի կերպ չէր կարելի դասել այդ հոսանքի գաղափարական մարտիկների շարքը, իսկ երբեմն դրանցից ոմանք ուղղակի պաշտպանում էին թերթի ընդհանուր ուղղությանը հակառակ հասարակական գաղափարներ։

Այսպես, օրինակ, պահպանողական «Մեղու Հայաստանի» լրագրի մեջ 80-ական թվականների սկզբներին Հովսեփ Տեր-Մովսիսյանը այս կամ այն հետևողականությամբ պաշտպանում էր ռուսական նարոդնիկության հայացքները, իսկ Տ. Ս.-ն ֆրանսիական մանր-բուրժուական սոցիալիզմի դիրքերից քննադատում էր կապիտալիզմի զարգացման առաջին քայլերը և հեռանկարներն Անդրկովկասում։

«Մշակ»-ում էլ շատ կան նրա ընդհանուր լիբերալ ուղղությանը անհարիր հոդվածներ, այդ թերթում էլ գրում են շատ հրապարակախոսներ, որոնք տարիներ շարունակ նարոդնիկական գաղափարներ են զարգացրել, կամ համակրական գիրք բռնել դեպի Ինտերնացիոնալի գործունեությունը, դեպի սոցիալ-դեմոկրատական շարժումը և այլն։

Թեև չի կարելի մոռանալ այն հանգամանքն էլ, որ XIX դարի երկրորդ կեսի հայ թերթերից ամենից ավելի հենց «Մշակ»-ն էր ճիգ անում դառնալ քաղաքական-հասարակական որոշ հոսանքի օրգան։ Թե ինչպես էր հասկացվում և իրագործվում այդ խնդիրը, կարելի է իմանալ հենց այն դատողություններից, որ այդ առիթով անում էր նրա հիմնադիրը։

«Լրագիրը պատասխանատու է միայն իր առաջնորդող և ընդհանուր, ուղղություն տվող հոդվածների համար, և ոչ թե թղթակցությունների և գծի տակ տպվող հոդվածների մեծ մասի համար»,—գրում էր 1878 թ. Գրիգոր Արծրունին։

«Այն բաժիններում, -շարունակում էր նա,—որոնք խմբագրական բաժիններ չեն..., մինչև անգամ լրագրին բոլորովին հակառակ ուղղության հոդվածներ տպելով, խմբագրությունը ուղղության պակասություն չէ ցույց տալիս, այլ ցույց է տալիս իր անկողմնապահություն»[1] (ընդգծումը հեղինակինն է։ Վ. Ռ.)։

Ճիշտ որ «Մշակ»-ի խմբագրին և նրա գաղափարական գինակիցներին

[1] «Մշակ», 1878 թ., № 25, Գ. Ա. «Ամեն բան պետք է բացատրել»։

չի կարելի մեղադրել «ուղղության պակասության» մեջ. նրանք համառ և հետևողական կերպով իրենց թերթում պայքարում էին լիբերալիզմի գաղափարները հայ իրականության մեջ ծավալելու համար, թեև հնարավոր էին համարում հանուն «անկողմնապահության» տեղ տալ «Մշակ»-ում «լրագրին բոլորովին հակառակ ուղղության հոդվածներին»։

Այստեղ մենք չենք զբաղվելու այդ վերջին կարգի հոդվածներով և նրանց հեղինակների հայացքների քննությամբ, այլ միայն փորձելու ենք պարզաբանել հայ լիբերալիզմի, այսպես ասած «մշակականության» տնտեսական-հասարակական իդեաների մի քանի էական գծերը։ Ինչպես կերևա առաջիկա շարադրանքից, այդ իդեաները մի զգալի չափով ուղղված էին հենց այն հոսանքների դեմ, որոնց արձագանքողներին «անկողմնապահության» համար իր էջերում հյուրընկալում էր «Մշակ»-ը։

«Մշակականության», իբրև քաղաքական-հասարակական հոսանքի, էությունը և դասակարգային բնույթը կարելի է ճիշտ հասկանալ, երբ հաշվի առնենք նրա անխզելի կապը Անդրկովկասի կապիտալիստական զարգացման ամբողջ ընթացքի հետ սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, նրա պայքարը մի կողմից՝ հին, ֆեոդալական հասարակական հարաբերությունների և հասկացողությունների դեմ, իսկ մյուս կողմից՝ հենց կապիտալիզմի զարգացման հետևանքով և նրա գրկում հասունացող հակաբուրժուական հոսանքների և շարժումների դեմ հանուն կապիտալիստական հարաբերությունների հաղթանակի։

Ուստի նախ քննության կառնենք «Մշակ»-ի պայքարը կապիտալիզմի զարգացման ուղին Անդրկովկասում հարթելու համար, ապա նրա ջանքերը մեր երկրում բանվորական հարցը լուծելու՝ կապիտալիզմի հիմքերն անխախտ պահելով և, վերջապես, նրա վճռական թշնամական վերաբերմունքը դեպի ամեն մի ռևոլուցիոն և սոցիալիստական շարժում։

1. «ՄՇԱԿ»-Ը ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ

«Մշակ»-ի հրատարակության հենց առաջին օրերից նրա ղեկավարներն ուշադրությամբ հետևում էին Անդրկովկասի տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին և ուրախությամբ նշում էին կապիտալիզմի նվաճումները, դրա զարգացման համար ստեղծված անհրաժեշտ պայմանները։

«Այս վերջին երեք տարին Կովկասի տնտեսական պատմության մեջ շատ աջողակ տարիներ էին»,—գոհունակությամբ արձանագրում էր «Մշակ»-ը 1872 թ.։ Այդ միջոցումը Թիֆլիսում հիմնվել են երկու գործարան և երեք բանկ»։

Այդ հաջողությունը պատահական չէ, արդյունաբերության զարգացման համար Անդրկովկասում բոլոր նպաստավոր պայմաններն արդեն կան, դրա համար էլ վերևի տողերի հեղինակը հույս է հայտնում, որ «... այս մի քանի փորձերի վերա մենք կարող ենք նայել ինչպես տնտեսական ձեռնարկությանց մի երկայն շղթայի առաջին օղերին»։

Այդ «երկայն շղթայի» հետ մեծ հույսեր են կապված։ Եթե «տնտեսական ձեռնարկությանց» այդ շարանն իրականություն դառնար, այն ժամանակ Անդրկովկասը ոչ միայն իր կարիքները կկարողանար հոգալ, այլե

ասիական շուկաներից դուրս կմղեր եվրոպական գործարանային ապրանքները. «Աշխարհիս հարստության համար եղած վեճի մեջ Կովկասը կունենար մեծ գերազանցություն ուրիշ երկրների վրա».—նշում է «Մշակ»-ը։

Իհարկե, այդ գործում մեծ է լինելու մասնավորապես հայերի դերը, որոնց «հետ մնալու պատճառն էր պատերազմը։ Այժմ պատերազմի դարն անցավ, մտնում ենք խաղաղության դարը», հույսով ու հավատով վերջացնում է «Մշակ»-ը իր դատողությունները Անդրկովկասի արդյունաբերական զարգացման հեռանկարների մասին։

«Մշակ»-ը չէր բավականանում միայն կապիտալիզմի այս կամ այն հայողությունը նշելով, կամ դրա զարգացման նպաստավոր հեռանկարները գծագրելով, այլև մատնանշում էր այն ուղին, որով կարելի է ապահովել կապիտալիստական արդյունաբերության հաղթանակը մեր երկրում։

1874 թ. «Մշակ»-ը «Տնտեսական հույսերը» առաջնորդողում իր ընթերցողներին հիշեցնելով վերջին երեք տարում կապիտալիզմի զարգացմանն օժանդակող այնպիսի կարևոր միջոցառումների մասին, ինչպես է երկաթուղու բացումը, որը (երկաթուղին) «կապում է Թիֆլիսը Սև ծովի հետ», բանկերի հիմնումը (հիմնվել են «երկու բանկեր և երևի շուտով հիմնվելու են դարձյալ երկուսը»), շարունակում է. թե ավելի էական պետք է համարել այն հանգամանքը, որ այժմ մեզ մոտ սկսել են հասկանալ կապիտալիստական ակցիոներական ընկերությունների կարևորությունը. այն ինչ «երեք տարի սրանից առաջ կովկասեցին չգիտեր, ինչ է բաժանորդական ընկերություն, ինչ է բնկերակցություն...» (ընդգծումը բնագրինն է։ Վ. Ռ.)։

Հենց այդ էլ հիմք է տալիս «Մշակ»-ին պնդելու, որ Անդրկովկասի տնտեսական զարգացման հույսերը կիրականանան, եթե կենսագործվի նրա առաջադրած ու պաշտպանած տնտեսական ծրագիրը, որի էությունը «Մշակ»-ը այսպես է ձևակերպում. «Մեծ կապիտալների և մեծ արդյունաբերողների համար բաժանորդական ընկերություններ», իսկ «փոքր կապիտալների և բազմաթիվ մանր, թե գյուղական, թե քաղաքի արդյունաբերողների համար՝ ընկերակցություններ...»[2] (ընդգծումները բնագրինն են։ Վ. Ռ.)։

Նշված սկզբունքներով արդյունաբերություն կազմակերպելու համար Անդրկովկասում կուտակվել են բավականաչափ «գումարներ» և այդ ի միջի այլոց վերջին ռուս-թյուրքական պատերազմի շնորհիվ։ Այդ առթիվ 1878 թ. Գրիգոր Արծրունին գրում էր. «Ինչքան և վատ հետևանքներ ունենա ամեն պատերազմ, նա ունի միշտ և իր լավ հետևանքները։ Դրանցից մեկն էլ այն էր, որ «...շատ հարստություն մտավ մեր երկիրը, շատերը հարըստացան, իրանց համար կարողություն շինեցին»։

Եվ ահա Արծրունին նշում է այդ կուտակած հարստությունների գործադրման ուղին Անդրկովկասի կապիտալիստական զարգացման շահերի համար. «Հույս ունենանք, որ մեր գումարատերերը կգործադրեն իրանց գումարները ոչ թե իրանց նեղ, անձնական նպատակների, այլ երկրի տեղական արդյունաբերության գործը առաջ տանելու և ծաղկեցնելու համար»։

Կապիտալների այդպիսի գործադրությունը հերթական և անհետաձգելի

---

1 «Մշակ», 1872 թ. № 34, «Արվեստագործությունը Կովկասում» առաջնորդող։

2 «Մշակ», 1874 թ. № 7, «Տնտեսական հույսերը» առաջնորդող։

խնդիր է մեր երկրի համար. «եթե մենք այդ չենք անի, ուշ կլինի, և այն ժամանակ մեր երկիրը կթափվեն օտար ազգի դուռարները»,— շարունակում է Արծրունին, հայ կապիտալիստների ուշադրությունը հրավիրելով օտար կապիտալի ներխուժման իրական վտանգի վրա։[1]

«Մշակ»-ի խմբագրին արձագանքում էին նրա զինակիցները։ Այսպես, օրինակ, թերթի Երևանի թղթակիցը տոաջ էր քաշում մասնավորապես Երևանի նահանգում կապիտալիստական խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ կազմակերպելու հարցը, չմոռանալով ուշադրություն հրավիրել օտար կապիտալի տիրապետության ոչ թե վտանգի, այլ ուղղակի փաստերի վրա։

«Թող հիմնեն մեր հարուստ վաճառականները մի մեծ ընկերություն ակցիաներով, որի նպատակը լինի արդյունագործել Երևանի նահանգի բերքերը, ունենալով մեծ գործարաններ թե դործելու, թե գինեդործության, թե շաքարի և այլն»։

«Մենք չմոռանանք,—շարունակում է նա,—որ այսօր, վաղը երկաթուղին կմտնի Երևան, կգա եվրոպացին և մեր սեփական հարստությունը կտանի։ Թող Երևանի վաճառականը աչքի առաջ ունենա Նորիկ և ընկ., որը իր ձեռքն է գցել Բազվի ամբողջ նավթագործությունը և իր ձեռքին է այժմ Բազվի տեղական նավթագործների բախտը»։[2]

«Մշակ»-ի մի այլ թղթակից մասնավորապես դրաղվում է Բազվի մանր նավթագործների հարցով և նրանց փրկության համար նշում է այն ելքը, որի մասին տարիներ շարունակ գրում էր Արծրունու թերթը. «...եթե Բազվի տեղային մանր արդյունաբերողները չմիանան, նոքա անպատճառ կոչնչանան, ամենևին անկարող լինելով ցլատված ուժերով դեմ դնել Շվեդիայի դրամական հսկային, որը խաղացնում է տեղացիների բախտը իր ձեռքում»։

Այդ «ընկերակցությունները» փրկության ելք են ոչ միայն քաղաքի մանր արդյունաբերողների համար, այլև դրանք միակ ուղին են գյուղի մանր արտադրողների կործանումը կանխելու համար։

Վերջին հարցը «Մշակ»-ը հարուցում է գյուղատնտեսական մթերքների թանգության խնդիրը քննելիս, որի պատճառը «մեր բոլոր թե երկրագործական և թե այգեդործական» տնտեսությունների փոքր լինելու մեջ է որոնում նա։

«Մեղանում դեռևս չկան... մեծ կամ ընդարձակ տնտեսություններ»,— դրում է Դրիդոր Արծրունին, իսկ «...փոքր արդյունաբերողի ունեցած ծախսերը անհամեմատ ավելի են, քան թե կապիտալիստի, այդ պատճառով նա էժան ծախել չէ կարող»։ Ուստի եթե «...հայտնվի մի կապիտալունեցող տնտես, որ իր միջոցներով հիմնի մի մեծ տնտեսություն, նա մահվան գարկ կտա փոքր տնտեսություններին...»։

Բայց հարկավոր է չմոռանալ հետևյալ կարևոր հանգամանքը. «Կապիտալը կարող է լինել մի անձի կարողությունը, բաժանորդական ընկերության դրամագլուխը կամ գյուղական ընկերության գումարը»։ Հենց

[1] «Մշակ», 1878 թ., № 93, Գ. Ա., «Գատերագմի հետևանքները» առաջնորդող։
[2] «Մշակ», 1883 թ., № 162, Ս Տեր-Մարտիրոսյանց, «Նամակ Երևանից»։
[3] «Մշակ», 1883 թ., № 139, Աբել Ապրեսյանց, «Ընկերություններ և առևտուր»։

այդ պատճառով էլ գյուղական մանր տնտեսատերերի համար փրկության ուղին այն կլիներ, որ նրանք «շտապեին միանալ... կազմեին դրամագլուխ ընկերակցությամբ՝ մեծ չափով տնտեսություն հիմնելու նպատակով»[1] Ուրիշ խոսքով՝ մանր արտադրողները կապիտալիստական մեծ ձեռնարկատիրությունն իրենց համար կարող են անվտանգ դարձնել միայն տնտեսության այդ նույն սիստեմին դիմելով։

Այսպիսով, կապիտալիզմից դուրս փրկություն չկա. կան միայն կապիտալ ունենալու և կապիտալի բարիքներից օգտվելու տարբեր ձևեր. քաղաքի և գյուղի մանր արտադրողների համար դրա միակ ձևը, ըստ «Մշակ»-ի, «ընկերակցությունն է»։

Ապա հարուցվում է նաև այն հարցը, թե ինչու կապիտալն իբրև «անձի կարողություն» ունեցող հայերը չեն կարողացել մինչև այժմ իրենց այդ հարստությունից հարկավոր ձևով օգտվել, չեն կարողացել աճեցնել, «ժառանգական ֆիրմա» դարձնել այն, թե ինչու «երբեք հարստությունը մեզանում երկու սերունդից ավելի չէ տևում...», թեև «70 տարուց ավելի է, որ Ռուսաստանը տիրապետում է Կովկասյան և Անդրկովկասյան երկիրը և այդ ամբողջ ժամանակամիջոցում երկրի ամբողջ վաճառականությունը, տերության կապալները, զորքի հասույթները—բոլորը հայերի ձեռքումն է եղել...»։

Այդ հարցին «Մշակ»-ը հետևյալ պատասխանն է տալիս. հայերի հարստանալու միջոցները... «հաստատ, տնտեսական խիստ կանոնների վրա չեն կայանում, աշխատանքի և արդյունագործության վրա չեն հիմնվում, այլ բախտի և ճարպիկության վրա...»։ Հայ հարուստներից «... ոչ մինը չէ հարստացել երկրի մեջ հիմնված տնտեսական, օգտավետ անտեսությամբ. կանոնավոր որևէ արդյունագործությամբ...», այլ «անկանոն կերպով, պատահական միջոցներով, որոնք բոլորովին դուրս են երկրի հետ սերտ կապ ունեցող կանոնավոր տնտեսական արդյունագործությունից»։[2]

Ակներև է, որ «Մշակ»-ը հայ վաճառականին, հայ կապալառուին կոչ է անում թողնել «բախտի և ճարպիկության» ասպարեզը և արդյունաբերական գործունեության ձեռնարկել կամ, նրա բառերով ասած, «կանոնավոր տնտեսական արդյունագործություն» սկսել։ Ուրիշ խոսքով՝ «Մշակ»-ը հանդես էր գալիս իբրև արդյունաբերական կապիտալիզմի զարգացման առաջամարտիկ Անդրկովկասում։

Եվ իսկապես «Մշակ»-ի խմբագիրն ու նրա գաղափարական զինակիցները տարիներ շարունակ չէին դադարում հայ վաճառականի ուշադրությունն այն բանի վրա սևեռելուց, որ հասել է արդեն ժամանակը, երբ նա պետք է ոտք դնի արդյունաբերության ասպարեզը, մշակի մեր երկրի հարստություններ։ Այդ ճանապարհով նա ոչ միայն ելք կգտնի այն «սարսափելի տագնապից», որի մեջ այժմ գտնվում է վաճառականությունը, գրում էր, օրինակ, 1888 թ. «Մշակ»-ի աշխատակիցներից մեկը, այլև մեր երկիրը կփրկի ամեն արդյունաբերական ապրանք դրսից ներմուծելու անհրաժեշտությունից։ Ինորոշ է, որ այդ նոր ասպարիզում վաճառականի

[1] «Մշակ», 1878 թ., № 187, Գ. Ա., «Ինչի՞ ամեն բան թանգ է» առաջնորդող։
[2] «Մշակ», 1878 թ., № 191, Գ. Ա., «Այդ մի հանելուկ է» առաջնորդող։

նեցուկը պետք է հանդիսանային «ուսումնական մարդիկ», այսինքն տեխնիկական ինտելիգենցիայի կադրերը։

Ժամանակ է, վերջապես, որ մեր վաճառականներից դուրս գան մարդիկ, որոնք միանան ուսումնական մարդկանց հետ, հիմնեն ընկերություններ..., զարգացնեն երկրի մշակությունը, գրավեն դեպի գործը աշխատավորի և բանվորի ձեռքը, զարգացնեն անասնապահությունը, շերամապահությունը, երկրագործությունը, գինեգործությունը, բամբակի, ծխախոտի և այլ ցանքերը»։ Գործի սկիզբը հավեստ կլինի, բայց այդ թող չշփոթեցնի մեզ, հորդոր է կարդում «Մշակ»-ի թղթակիցը. «թող մենք ևս փոքրից սկսենք. շինենք առայժմ ամենահարկավոր արդյունքների գործարաններ», որ հետզհետե կարողանանք անկախանալ արդյունաբերական այլ երկրներից։[1]

Այդ նույն հարցին անդրադառնալով՝ Գրիգոր Արծրունին հայ վաճառականի առաջ ոչ միայն շատ ավելի լայն արդյունաբերական խնդիրներ էր դնում, այլև այդ կապակցությամբ նշում էր նրա ուննալիք դեկավար և աղգօգուտ դերը հայ հասարակական կյանքում։

Տնտեսական հիմնական խնդիրն այն է, որ հայ վաճառականները պետք է «միջնորդի» դերից անցնեն «արդյունաբերողի» վիճակին, «...պետք է մշակեն մեր երկրի հանքային, հրկրագործական ուժերը, պետք է ձեռնամուխ լինեն գործարանական արդյունաբերությանը»։ Այդ ասպարիզում նրանց հանդեպ ծառանալու է «օտար խոշոր կապիտալիստների» մրցությունը, որի հաղթահարման համար նրանք «պետք է իրար մեջ միանան, ընկերություններ կազմեն, որպեսզի իրանց ընկերակցություններով դիմադրեն օտար կապիտալի ուժին»։

Հայկական «միացած կապիտալը» հնարավորություն կստանա լուծելու նաև այլ կարևոր խնդիրներ. այսպես, օրինակ, նա «գործ. պարապմունք կտա երկրի ստորին դասակարգին, բանվորներին, արգելք դնելով այդ դասակարգի գաղթականության երևույթին»։

Ապա նա ի վիճակի կդառնա դեկավար դեր խաղալու հայ աղգային կյանքում, աղգի նյութական հենարանը լինելու։ Հայտնի է, դատում է Գրիգոր Արծրունին, որ «մեր ժողովրդի բարձր դասակարգը անտարբեր է դեպի աղգային գործերը, իսկ մեր ժողովրդի ստորին դասակարգը, մեր նահապետական արհեստավորներն ու անգրագետ գյուղացիները տգետ են...»։ Հետևաբար, նշում է նա, «մեր աղգի միջին դասակարգը միակ դասակարգն է, որը արձագանք է տալիս մեր կյանքի բոլոր առօրյա պահանջներին»։ Այդ պատճառով էլ Արծրունին այդ հարցի մասին իր դատողությունները վերջացնում է այսպիսի բարեմաղթությամբ ի պատիվ աղգի այդ «միջին դասակարգի»։

«Ուրեմն ցանկանանք, որ մեր միջին դասակարգը հարստանա, որպեսզի համ հարստացնե երկիրը, արդյունաշահելով երկրի բնական հարստությունները, համ աղգն էլ նրանից նյութապես օգտվի»։[2]

Այսպիսով, հայ աղգային կյանքում խաղալիք իր տնտեսական և հասարակական դերով «միջին դասակարգը» հակադրվում է մի կողմից՝ ժողովրդի

[1] «Մշակ», 1888 թ., № 131, ***, «Կովկասի Ներկա վաճառականությունը»։
[2] «Մշակ», 1890 թ., № 63, Գ. Ա., «Վաճառականությունը մեր մեջ» առաջնորդողը։
[3] «Մշակ», 1890 թ., № 64, Գ. Ա. «Վաճառականությունը մեր մեջ» առաջնորդողը

«բարձր դասակարգին», որն «անտարբեր է դեպի ազգային գործերը», մյուս կողմից «ստորին դասակարգին», որը կազմված է ազգի կյանքում որևէ դեր խաղալու անկարող նահապետական տգետ արհեստավորներից և անգրագետ գյուղացիներից։ Որպեսզի հայ «միջին դասակարգը» կարող լինի ազգային կյանքում իրեն վիճակված դերը լրիվ կատարելու՝ նա պետք է դառնա «երկրի բնական հարստություններին» արդյունաշահող, ինչպես արտահայտվում է Արծրունին, թե իր և թե ազգի օգտին, ուրեմն պետք է թողնի միջնորդի վիճակը, իր ձեռքն առնի երկրի արդյունաբերության կազմակերպումը։

Ահա այս ամենն էլ մեզ հիմք է տալիս ասելու, որ Արծրունին և իր դինակիցները, նրանց թերթը՝ «Մշակ»-ը Անդրկովկասի արդյունաբերական կապիտալիզմի դարգացման առաջամարտիկներն էին, հայկական լիբերալիզմի իդեոլոգները։ Այս միտքն ավելի կհիմնավորվի, եթե ծանոթանանք այն ամենին, ինչ որ Արծրունին գրում էր այսպես ասած «միջին դասակարգի» կազմի, պատմական դերի մասին։

* * *

«Միջին դասակարգի» կազմի և հայ ազգի կյանքում նրա ունեցած դերի մասին շատ անդամ է գրում «Մշակ»-ի խմբագիրը։ Այսպես, օրինակ, 1876 թ. Թիֆլիսի քաղաքային ինքնավարության հարցը քննելիս՝ նա այդ խնդրի մասին հետևյալ դատողություններն է անում. «Հայոց ազգը իսկապես կազմված է միայն երկու դասից՝ գյուղական, երկրագործ մշակներից և քաղաքի արհեստավոր մշակներից և միջին դասից, որի մեջ ամփոփված է մեր բոլոր մտավոր և նյութական ուժը»։

Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ նա ազգի կազմից այս անգամ նույնիսկ հանում է «բարձր դասին», և տեսնենք, թե ինչպես է պատկերացնում նա այդ «միջին դաս» կոչվածի կազմը և նրա նշանակությունը հայ ազգի բովանդակ կյանքում։

«Մեղանում, — գրում է Արծրունին, — ամբողջ հասարակական ուժը կայանում է միջին դասի մեջ. դրագիտությունը, արվեստներով պարապողները (որքան և անկատար լինեին մեր արվեստները) կոչկակարից սկսած մինչև բժշկապետները և ինժիներները, վաճառականությունը, մտավոր դարգացումը, ձգտումն դեպի ուսում, ինտելիգենցիան, արդյունաղործությունը, — բոլորը ամփոփվում է միջին դասի մեջ»։

Ապա Արծրունին «միջին դասի» դերին հատկապես Թիֆլիսի քաղաքային ինքնավարության, նաև ընդհանրապես մարդկային պատմության մեջ այսպիսի գնահատական է տալիս. «Մեր ինքնավարությունը ուրեմն հաստատ գոյություն կստանա, հիմնվելով միայն միջին դասի վրա, որ ամեն երկրում, մարդկության պատմության ամեն դարերում եղել է բոլոր հասարակական առաջադիմության աղբյուր»։[2]

---

[1] Հիշեցնենք ընթերցողին, որ Արծրունին այս տերմինը գործ է ածում ֆրանսիական բուրժուական պատմաբան Մինյեի հեղինակությամբ և նույն իմաստով, ինչ որ նա։

[2] «Մշակ», 1876 թ., № 39, Գ. Ա., «Մեր ինքնավարությունը» առաջնորդող։

Այսպիսով, Գրիգոր Արծրունին հայ «միջին դասի» այժմյան դեկավար գերի կոչված լինելը հասարակական կյանքում հիմնավորում է ընդհանրապես միջին դասի «հասարակական առաջադիմության աղբյուր» լինելու մշտական իրողությամբ մարդկության պատմության մեջ, ուրիշ խոսքով՝ կրկնում է իր եվրոպական ուսուցիչների առասպելը բուրժուական կարգերի և բուրժուազիայի հավիտենական գոյության ու պրոգրեսիվ ուժ լինելու մասին։

Ելակետ ունենալով այդ իրողությունը՝ նա ամեն առիթ օգտագործում է, որ հայ «միջին դասին», այսինքն նոր ձևավորվող հայ արդյունաբերական բուրժուազիային, տնտեսապես կազմակերպի և իդեոլոգիապես դինի իր հասարակական-պատմական դերի համար Անդրկովկասի հայ ազգային կյանքում։

«Մշակ»-ի հրատարակության տասնամյակի առիթով (1881 թ. վերջին) Արծրունին նորից է անդրադառնում «միջին դասակարգի» հարցին (ընթերցողը, անշուշտ, նկատում է, որ նա «դաս» և «դասակարգ» տերմինները նույն իմաստով է գործածում) և ավելի մանրամասն բացատրություններ տալիս նրա կազմի մասին, ապա որոշում թերթի վերաբերմունքը դեպի նա։

«Մեր ուղղությունը, մեր գործունեության եզանակը և գործելու շրջանը արդեն նախագծվեցավ մեր լրագրի գոյության տաս տարվա ընթացքում. մենք գործ ունենք հայոց ազգի միջին դասակարգի հետ, որ հենվում է ռուսահայերի մի միլիոն ամբոխի վրա, որի շրջանում, առանց կրոնի խարության, հետզհետե կաճեն մեր բաժանորդները, մեր կուսակից ները»։

«Մի միլիոն ամբոխի վրա» հենվող այդ «միջին դասակարգի» կազմի մեջ, ըստ «Մշակ»-ի խմբագրի, մտնում են՝ «ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ, քահանաներ, վարժուհիներ, փոքրիկ պաշտոնյաներ, միջին դասակարգի կանայք և օրիորդներ, մանր վաճառականներ, գյուղական տանուտերեր, արվեստավորներ»։

Սրանք «ամբոխը» չեն, Արծրունին նրա մասին առանձին է խոսում, «շելով, որ «Մշակ»-ը հետզհետե բաժանորդներ և ընթերցողներ է գտնում նաև «ժողովրդի ստորին դասակարգի մեջ՝ արվեստավորների, բանվորների գյուղացիների և մինչև անգամ քաղաքի մշակների մեջ»։

Իսկ «բարձր դասակարգը», գրում է Արծրունին, խորթացել է հայ ազգային կյանքին, հայ լեզվին, լրագրին. դրա համար էլ հայ ազգային ուժերը «միջին դասակարգի» գեկավարության տակ համախմբելու համար պայքարող «Մշակ»-ը հրաժարվում է նրանից, նրա մեջ մտցնելով մի բավական խայտաբղետ մասսա։ Ահա նրա կազմը ըստ Դր. Արծրունու. «Մ՝արձր շրջանների, համալսարանականների, հարստացած բուրժուաների, հայությենից օտարացածների, հայությունը արհամարհողների, մայրենի լեզու ատողների, միմիայն իրանց շահի ետևից ընկնողների, ժողովուրդը մոլորեցնողների և նրան հարստահարողների հետ մենք գործ չունենք»։[1]

Ինչպես պարզ երևում է վերևի շարադրանքից, Արծրունին բոլորովին շփոթ հասկացողություն ունի «դաս» կամ «դասակարգ» տերմինի սոցիալ-

[1] «Մշակ», 1881 թ., № 241, Դ. Ա., «Մշակ»-ի տաս տարվա տարեդարձը» առաջնորդող։

անտեսական բովանդակության մասին և մի դասակարգի մեջ միացնում է լիովին տարբեր հասարակական շերտեր։ Բայց վեհ չսկսենք նրա հետ մեթոդոլոգիական հարցերի շուրջը, այլ միայն նշենք, որ, օրինակ, այսպես կոչված «բարձր դասակարգին» պատկանողները մի էական բանով իրար նման են և հենց այդ պատճառով էլ մերժելի են Արծրունու համար. նրանք հայ ազգի համար նյութական ու հոգևոր արժեքներ ստեղծելու գործին անմասն են, դրա համար էլ, անկախ իրենց անտեսական-սոցիալական վիճակից, մի շարքում են դասված, և ինչպես Արծրունին է արտահայտվում, «Մշակ»-ը, իբրև ազգային և ժողովրդական թերթ, դրանց հետ գործ չունի։

«Մտորին դասակարգի» մեջ գտեղված հայ գյուղացին, արհեստավորն ու բանվորը, ըստ Արծրունու, հայ ազգային կյանքում նույնպես չեն կարող, վերևում նշված իմաստով, դրական դեր խաղալ. նրանք էլ իրենց ագիտության շնորհիվ են անմասն մնում ազգի անտեսական ու կուլտուրական առաջադիմության գործին։

Այսպիսով, մնում է «միջին դասակարգը», որն ազգի հիմքն է և որի կազմի մեջ, ինչպես վերևում տեսանք, Արծրունին մտցնում է նախ՝ երկիրը տարդյունաշահող, ինքը հարստացող և ազգին էլ նյութապես օժանդակող հայ արդյունաբերական բուրժուազիային, ապա նաև մանր-բուրժուական շերտերին, մասնավորապես մանր-բուրժուական ինտելիգենցիային։

Արծրունին հենց այդ «միջին դասակարգի» մեջ է ամփոփված տեսնում հայ ազգի բոլոր նյութական և ժառավոր կարողությունները, հենց նա է, այդ «միջին դասակարգը», որ ինչպես բոլոր դարերում և բոլոր ժողովուրդների մեջ, այնպես էլ հայ ազգի կյանքում պետք է լինի «բոլոր հասարակական առաջադիմության ազբյուր»։

Թե ինչու Արծրունին այդպիսի խայտաբղետ մասսա էր հավաքագրում «միջին դասակարգի» մեջ, կարելի է իմանալ հենց «Մշակ»-ից։ Պարզվում է, որ այդ միայն հայկական կյանքին հատուկ բան չէ, այլ ընդհանուր երևույթ է։

Այսպես, օրինակ, դեռ 1872 թ., այսինքն իր հրատարակության առաջին տարին, «Մշակ»-ը գրում էր, որ եվրոպական «կյանքի ժամանակակից շրջանը կարելի է անվանել բուրժուազական պատմական շրջան. այնտեղ տիրող է դառնում բուրժուազիան կամ, «Մշակ»-ի սովորական տերմինով ասած, «միջին դասակարգը»։ Ապա նշվում էր այն հանգամանքը, որ թեև «բուրժուազական կուսակցությունը այնպիսի մի կուսակցություն է, որ պետության բոլոր գործերի կառավարությունը կամենում է այնպիսի անձերի ձեռքը գցել, որք մեծ կապիտալների (դրամագլուխների) տեր անձինք են», բայց այդ կուսակցության մեջ կան «ազքատ մարդիկ» էլ, «մեծ մասամբ կրթված (կա կրթություն և կրթություն), որք ազդեցություն ունենալով պակաս կրթության տեր հարուստ մարդիկների վերա, ծառայում են նրանց նպատակներին, ստանում են նոցանից ապրուստի համար հարկավոր միջոցները և այսպես պաշտպանում են նրանց տիրապետությունը երկրի մեջ»։

Բուրժուազիայի, նրա կուսակցության տիրապետության պայմաններին անցնելով, «Մշակ»-ը նշում էր. «Նա հասարակական կովի մեջ օգ-

նություն է խնդրում մի գորեղ միջոցից, այն է՝ հարստությունից, որի առաջ ամեն բան չնչին է, ... և բացի սորանից՝ նա իր նպատակներին ծառայեցնում է մտավոր ուժերի մեծ մասը, թե գիտական, թե օրագրական»[1]

Այդպես էր Արևմտյան Եվրոպայում, այդպես պետք է լիներ նաև Անդրկովկասում. դրա իրագործման համար էր պայքար ծավալում «Մշակ»-ը, նշելով, ինչպես անսանք վերևում, որ հայ ազգի բոլոր նյութական և մտավոր ուժերը ամփոփված են «միջին դասակարգի» մեջ։ Նյութական ուժի ներկայացուցիչներին՝ հայ բուրժուազիային նա կոչ էր անում, հորդորում ե մղում դեպի արդյունաբերական գործունեություն, դեպի կապիտալիստական տնտեսության կազմակերպումը Անդրկովկասում։ Պարզ է, որ ինչպես Եվրոպայում, այնպես էլ մեր երկրում «պակաս կրթության տեր հարուստ» մարդիկ, հայ վաճառականները տնտեսության այդ նոր ասպարիզում հարկ պետք է գգային օգտագործելու իրենց նոր նպատակների կենսագործման համար նաև հայկական «մտավոր ուժերի մեծ մասը, թե գիտական, թե օրագրական», իհարկե, ապահովելով նրանց «ապրուստի համար հարկավոր միջոցները»։

Այսպիսով, հայկական կյանքում էլ՝ եվրոպականի նման՝ բուրժուազիայի կամ «միջին դասակարգի», նրա կուսակցության շարքերում անխուսափելիորեն պետք է լիներ նաև շատ «ազգաստ մարդիկ», այն էլ «մեծ մասամբ կրթված», որոնք այնտեղ մի դեր ունեն խաղալու, այն է՝ ծառայելու հարուստների նպատակներին։ Ահա ինչու «Մշակ»-ը հայ «մտավոր ուժի» գրեթե բոլոր ներկայացուցիչներին, այսինքն հայ ինտելիգենցիային մտցնում էր «միջին դասակարգի» մեջ և նրան ի սպաս դնում Անդրկովկասում զարգանալ սկսող արդյունաբերական կապիտալիզմի շահերին, հայ բուրժուազիային, ելակետ ունենալով այն, որ ինչպես ամենուրեք, այնպես էլ հայ ազգի մեջ հենց այդ «միջին դասակարգն» է «հասարակության առաջադիմության ազբյուրը»։

Եվ «Մշակ»-ը, նրա խմբագիրը տարիներ շարունակ իրենց «թե գիտական, թե օրագրական» բոլոր ուժերը խղճի մտոք նվիրել էին այն բանին, որ հայկական բուրժուազիային նախապատրաստեն և կազմակերպեն իր այդ պատմական միսիան հասկանալու և կատարելու հայ ազգային կյանքում, ուրիշ խոսքով, ինչպես վերևում նշեցինք, իրոք որ «մշակականությունը» ասպարեզ իջավ իբրև արդյունաբերական կապիտալիզմի առաջամարտիկ Անդրկովկասում, ձևավորեց և զարգացրեց նրա դասակարգային գաղափարախոսությունը XIX դարի վերջին երեք տասնամյակում, հանդիսացավ բուրժուական լիբերալիզմի մարտական օրգանը ռուսահայ իրականության մեջ։

II. «ՄՇԱԿ»-Ը ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Կապիտալիզմի զարգացման առաջին հաջողություններն Անդրկովկասում, մասնավորապես Բաքվում, հրապարակ բերեցին և հայկական մա-

[1] «Մշակ», 1872 թ., № 43, «Ինչ է բուրժուազի» խմբագրական հոդվածը։

մուլի ուշադրության առարկա դարձրին մի նոր հասարակական պրոբլեմ՝ բանվորական հարցը, որով ամենից շատ զբաղվեց հենց «Մշակ»-ը և հասկանալի պատճառով մասնավորապես 70-ական թվականների վերջերից սկսած, երբ արդեն քիչ-շատ շոշափելի էին դարձել տնտեսական-հասարակական այն նոր հարաբերությունների արդյունքները, որ կապված էին կապիտալիզմի հետ։

«Մշակ»-ը բանվորական հարցի հարուցման և դրա լուծման ուղիները նշելիս՝ հավատարիմ մնաց իր լիբերալ դավանանքին. իբրև կանոն, այդ հարցի մասին դրելիս՝ ինքնին հասկանալի էր համարվում կապիտալիզմի անխախտ մնալու սկզբունքը, և բանվորական հարցի լուծումը «Մշակ»-ի հրապարակախոսները որոնում էին կապիտալիստական արտադրական հարաբերությունների շրջանակում։

Այդ հարցում ըստ էության «Մշակ»-ի դիրքին էին հարում նրա աշխատակիցներից այնպիսի մարդիկ անգամ, որոնց առանց վերապահության չի կարելի «մշակականների» շարքը դասել, որոնց հոդվածներում երևան է գալիս որոշ քննադատական վերաբերմունք դեպի կապիտալիստական շահագործման սիստեմը. բայց որոնք բանվորական հարցի լուծումը նշում են լիբերալ գրողների և գործիչների հետևողությամբ։

Իբրև օրինակ քննության առնենք Ներսես Աբելյանի հոդվածները և ցույց տանք, թե ինչպես 70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբներին նարոդնիկորեն տրամադրված այդ հեղինակը փաստորեն կանգնած է «Մշակ»-ի լիբերալ դիրքի վրա, երբ փորձ է անում բանվորներին ելք ցույց տալ կապիտալիստական շահագործման դեմ։

1879 թ. Մոսկվայից գրած իր թղթակցություններից մեկում Ն. Աբելյանը կապիտալիզմի զարգացման արդյունքները ժողովրդական մասսայի համար հետևյալ ձևով է նկարագրում.

«Մեզանում գործարանական արդյունագործությունը խլում է ազատ մշակին մայր հողից և ժողովելով գործարանների մեջ՝ կապում է նրան տնտեսապես. բանական մարդը դառնում է մեքենայի անբան մասերից մեկը, մոռացվում է հոգեկան և բարոյական մարդը, իսկ մնում է միայն մի ֆիզիկական ուժ, որը հարկավոր է գործածել ավելի բախտավորների նյութական բարիքները և հարմարությունները բազմապատկելու համար»[1]

«Մշակ»-ը, նշում է նա, շարունակ պայքարել է շահագործման այլ տեսակների դեմ, մասնավորապես վաշխառուների և առևտրականների ամեն ձևի շահատակությունների դեմ, ուստի նա լիահույս է, որ «Մշակ»-ը «չի պլանա հարձակվելու հարստահարության նոր տեսակների վրա. նրա պարտավորությունն է պաշտպան հանդիսանալ մեծամասնության օգուտներին»[2]

[1] Նշված ժամանակաշրջանում Մոսկվայի ուսանողական գաղտնի խմբակներում Ն. Աբելյանի ազգային հեղափոխական-դեմոկրատական գործունեության մասին հետաքրքրական տեղեկություններ է տալիս ընկեր Մ. Ներսիսյանն իր դեռ չտպագրված գիտական դիսերտացիայում՝ «Հայ ազգային-ազատագրական շարժումները 1860—1880-ական թթ.»։

[2] «Մշակ», 1879 թ., № 183. Ն. Աբելյանց. «Տնտեսական հարստահարությունների առթիվ»։

Այսպիսով, Ն. Աբելյանը «հարստահարության նոր տեսակների», այսինքն կապիտալիստական արդյունաբերության մեջ բանվորների շահագործման դեմ պայքարելու հրավեր կարդալով «Մշակ»-ին, ինքն էլ նրա էջերում փորձ է անում բանվորների շահերի պաշտպան կանգնել, մերկացնելով կապիտալիստական տնտեսության կործանարար բնույթը և ծանր հետևանքները ժողովրդական մասսաների համար։

«Եվրոպայի քաղաքակրթությունը իր փարթամ հարստությամբ չպետք է մեզ հիացնի,—գրում է նա,—երբ իմանանք, որ այս քաղաքակրթության պտուղները փոքրաթիվ բախտավորներ են վայելում, երբ իմանանք, որ նրա միլիոնավոր ժողովրդի արյուն-քրտինք աշխատանքի գինը մտնում է մի քանի տասնյակ դրամատերերի գրպանը, մինչդեռ մշակին մնում է այնքան, որ նա կարողանա միայն իր ֆիզիկական ուժը պահելու՝ կրկին դրամատերերի գրպանը հարստացնելու համար»։

Հասարակական կյանքի այդ չարիքի վրա վաղուց ուշադրություն են դարձրել մեր «մարդասիրական դարի» մտածողները, «զգայուն սրտերը»,—շարունակում է Ն. Աբելյանը,—և ելք նշել երկու ուղղությամբ, այսինքն «ամեն մի կերպ միջոցներ են գործ դրել մշակների նյութական դրությունը բարվոքելու, քարոզել են և քարոզում են հիմա ևս նոր վարդապետություններ, որտեղ ավանդվում է բոլորովին նոր հասարակական կազմակերպություն ավելի արդար հիմունքների վրա, քան թե ներկան»։

Թե ինչ «նոր վարդապետությունների» մասին է խոսքը, կարելի է կռահել նրա այն դիտողությունից, թե «... երևելի Ջոն Ստյուարտ Միլլը հաստատում է, որ այս վարդապետությունները ավելի արդար հասարակական կազմակերպություն են ներկայացնում, քան ներկան, չնայելով որ Միլլը ինքը բուրժուազիական քաղաքատնտեսներից գլխավորն է և հակառակ է այս վարդապետությունները քարոզողներին»։

Հայտնի է, որ Միլլը նկատի ուներ սոցիալիստական «վարդապետությունները», նա սոցիալիզմն էր «ավելի արդար հասարակական կազմակերպություն» համարում, թեև ի վիճակի չէր զգում իրեն նրա կողմն անցնելու։

Այդ բանում ավելի անորոշ և անվճռական դիրք է բռնում Ն. Աբելյանը, նա ի վիճակի չի լինում անդամ Միլլի նման «թեորիապես» իրեն համակիր հայտարարելու այդ «նոր վարդապետություններին» և բավականանում է միայն հարցի լուծումը ապագային թողնելով, «թե ում կողմն է ճշմարտությունը՝ ապագան կպարզի»,—գրում է նա։

Իսկ ներկայի համար, այսինքն կապիտալիզմի պայմաններում, նա բանվորների փրկությունը կապված է տեսնում այնպիսի միջոցառումների հետ, որ հիմնովին ներհակ են Միլլի նշած «վարդապետությունների» գծած ուղուն և հետամուտ են այն նպատակին, որ բանվորական հարցը լուծեն ոչ թե «ավելի արդար հասարակական կազմակերպություն» ստեղծելով, այլ կապիտալիզմի հիմունքներն անխախտ պահելով, հենց նրա շրջանակներում։

«Մշակների նյութական դրությունը բարվոքելու համար,—գրում է այդ մասին Ն. Աբելյանը,—ամենանպատակահարմար են համարվում արդյունաբերող ընկերություններ և մասամբ սպառող ընկերություններ (ընդ-

գծումները հեղինակինն են։ Վ. Ռ.), որոնք խաղաղ ճանապարհով պետք է կատարեն մեծ տնտեսական հեղափոխություն ներկա հասարակական-տնտեսական կազմակերպության մեջ. այս ընկերությունների մեջ են դանում մշակի փրկությունը»։

Նա հավատացած է, որ այդ «մեծ տնտեսական հեղափոխությունը», այն էլ «խաղաղ ճանապարհով», հնարավոր է դառնալու, որովհետև «...արդյունաբերող ընկերության նպատակն է տալ մշակին հարկավոր կապիտալը և ուրեմն շինել նրան հավ աշխատող մշակ, հավ տեր բոլոր արդյունագործության։ Մշակների դլխին ծանրացած բոլոր չարիքները համարյա սրանով ոչնչանում են...»։[1]

Ահա այն ուղին, որով Ն. Աբելյանը ծրագրում էր փրկել հայ բանվորներին կապիտալիզմի բոլոր չարիքներից։ Դժվար չէ հասկանալ, որ նա «Մշակ»-ում կրկնում էր այն, ինչ որ Գերմանիայում վաղուց քարոզում ու կենսագործել էին փորձում Շուլցե-Դելիչը և նրա հետևորդները։

Իսկ այն ուղին, որով Շուլցե-Դելիչը և նմանները ջանում էին տանել գերմանական բանվորներին, Լենինն անվանում էր «պրոգրեսիստական արեգ-ունիոնիզմի և կոոպերատիվիզմի ուղի». «Ինչում էր Լասսալի պատմական վաստակը գերմանական բանվորական շարժման առաջ։ Այն բանում, որ նա այդ շարժումը հանեց (совлек) այն պրոգրեսիստական տրեդ-ունիոնիզմի և կոոպերատիվիզմի ուղուց, դեպի որը տարերայնորեն ուղղվում էր այն (Շուլցե-Դելիչների և նրա նմանների բարեհաճ մասնակցությամբ)»։

Մի այլ առիթով Լենինը հետևյալ բացատրությունն է տալիս իր այդ բնութագրին. «Չի ասված արդյոք ինձ մոտ, որ բանվորական շարժումը Շուլցե-Դելիչների և սրա նմանների բարեհաճ աջակցությամբ դեպի բուրժուականություն է տարվում»։[3]

«Բանվորները Գերմանիայում սրանից կես դար առաջ դեռ գնում էին լիբերալ Շուլցե-Դելիչի հետևից,[4]—գրում է Լենինը մի ուրիշ անգամ, անդրադառնալով նույն հարցին։

Այսպես ուրեմն, Ն. Աբելյանը «Մշակ»-ի էջերում բանվորներին կապիտալիստական շահագործումից փրկելու այն լիբերալ, բուրժուական ուղին է հրամցնում, որից նրանց հանելը Լենինը համարում է «Լասսալի պատմական վաստակը գերմանական բանվորական շարժման առաջ»։

Տարիներ հետո, 90-ական թվականների վերջին, «Մշակ»-ը նորից առիթ է ունենում գրել Շուլցե-Դելիչի ընկերությունների մասին, դրանց 50-ամյակի կապակցությամբ և դարձյալ դրանց մեջ է որոնում բանվորների փրկությունը կապիտալիստական շահագործումից։

[1] «Մշակ», 1879 թ., № 191, Ն. Աբելյանց. «Գործող ընկերությունների մասին և նրանց կարևորությունը մեզ համար»։

[2] *Ленин*, Соч., т. IV, „Что делать?", стр.392.

[3] *Ленин*, Соч., т. VI. „Речь по вопросу о программе партии" 4 августа (22 июля), стр. 22.

[4] *Ленин*, Соч. т. XVII. „Заключение к сборнику: „Марксизм и ликвидаторство", стр. 286.

Սխալմամբ ենթադրելով, որ այդ ընկերությունները միայն սպառողական են, «Մշակ»-ը նշում է, որ դրանց շնորհիվ հնարավոր է վերացնել միայն միջնորդի շահը, այսինքն ապահովել բանվորին իրրև սպառողի։ Բայց, շարունակում է «Մշակ»-ը, «... միայն Շուլցե-Դելիչյան ընկերությունները դեռ չեն կարող գոհացնել բանվոր դասակարգի բոլոր պահանջները», «...բացի դրանցից անհրաժեշտ են և ուրիշ ընկերություններ, որոնք միացնեին աշխատողներին և կազմակերպեին արդյունագործական ձեռնարկություններ, օրինակ, բանային սեփական գործարաններ, որպեսզի արդյունագործության շահը չանցնի մասնավոր գործարանատերերի ձեռքը, այլ մնա աշխատողներին»[1]։

Ինչպես նշեցինք, «Մշակ»-ը սխալվում էր։ Շուլցե-Դելիչի ընկերությունները նաև արտադրողական էին, և «Մշակ»-ը միայն կրկնում էր «աշխատավորների օգնոգի», այսինքն Շուլցե-Դելիչի վաղուց հայտնի և գործադրվող ծրագրերը, այն է՝ կապիտալիզմի շահագործումը բանվորների նկատմամբ հաղթահարելի էր համարում բանվորական գործարաններ բանալու միջոցով, անխախտ պահելով կապիտալիզմը, դրա դեմ պայքարելու մասին մի խոսք անգամ չթողնելով։ Դուրս չգալով Շուլցե-Դելիչի գծագրած շրջանակից, որի գործունեությունը, ինչպես տեսանք, Լենինը բնութագրում էր իրրև լիբերալ և բուրժուական, խորթ բանվոր դասակարգի նպատակներին։

Այն բոլոր դեպքերում, երբ «Մշակ»-ի գեկավարները, կամ մյուս թղթակիցները անդրադարձել են բանվորական հարցին, իրրև կանոն դուրս չեն եկել նրա լիբերալ-բուրժուական գաղափարների շրջանակից։ Բնության առնենք մի երկու օրինակ։

«Մեր լրագրության մեջ եթե ոչ ամենևին, գոնե շատ քիչ են պատահում հոդվածներ առհասարակ մշակների դրության առթիվ»,—գրում է 1880 թ. Շիրվանզադեն Տաքվից։ Ապա հիշեցնելով Ն. Արելյանի մեղ արդեն ծանոթ հոդվածները և ուշադրություն հրավիրելով նրա այն առաջարկի վրա, թե անհրաժեշտ է «... հիմնել Կովկասի գանազան քաղաքներում այնպիսի ընկերություններ, որոնց նպատակը լիներ մշակների գոնե տնտեսական դրության բարվոքումն»—Շիրվանզադեն շարունակում է. «Ի՞այդ դժբախտաբար այդ կարևոր առաջարկությունը մնաց, ինչպես ասում են, «ձայն բարբառոյ յանապատի»։

Այսպիսով, բանվորական հարցի լուծման «մշակական» դրվածքին իր հավանությունը տալով, Շիրվանզադեն անցնում է «Բաքվի մշակների» աշխատանքի և կյանքի տաժանելի պայմանների նկարագրությանը և իր հոդվածը վերջացնում է այն հույսով, որ «արդարադատ «Մշակ» լրագիրը, որ միշտ չէ պլացել պաշտպան հանդիսանալ ամենայն տառապյալներին և հալածյալներին, պաշտպան կանդիսանա և հասարակության այդ թշվառ դասակարգին—մշակներին, որոնք այդչափ բարբարոսաբար հարստահարվում են»։

[1] «Մշակ», 1899 թ., № 88, «Աշխատավորների օգնոգին» առաջնորդող։

«Մշակ»-ի պաշտպանությանը հանձնելով հայ բանվորներին, «հասարակության այդ թշվառ դասակարգին», Շիրվանզադեն խոստանում է նաև իր աջակցությունը, «իսկ ես ժամանակ առ ժամանակ կաշխատեմ դիմել այդ հարցին»[1]

Շիրվանզադեն իր խոստումը չկատարեց. նա «Մշակ»-ում բանվորական հարցի մասին այլևս չգրեց, իսկ այն, ինչ որ քննության առանք վերևում, պարզ ցույց է տալիս, որ նա այդ հարցում կանգնած է «Մշակ»-ի լիբերալ դիրքի վրա։

Բանվորական հարցի մասին նույն ոգով գրում է նրա մի ուրիշ աշխատակիցը՝ Էմմանուելը։ Նրանից իմանում ենք, որ «...մշակների տնտեսական դրության բարվոքման հարցը վաղուց արդեն մտել է հասարակական ամենակարևոր հարցերի շրջանը, և այժմ չկա դրեթե մի փոքր ի շատե ինքնաճանաչ ազգ կամ ժողովուրդ, որը քիչ թե շատ, այսպես թե այնպես չզբաղվեր մարդկության այդ ամենաթշվառ դասակարգի վիճակով, չաշխատեր գոնե ժամանակ առ ժամանակ նորոգելով նրա անթիվ վերքերի սպեղանին, թեթևացնել նրա դառնակսկիծ ցավերը»։

Միայն մեր երկրում է, շարունակում է նա, որ մշակը չի շարժում «մեր բնական մարդասիրական զգացմունքները»։ Եվ տեղ մեզ մոտ էլ դրանց ընթացք տալու համար՝ նա նկարագրում է Բաքվի բանվորների ծանր դրությունը գործարանում և տանը, հատուկ ուշադրություն հրավիրելով հայ բանվորների կենցաղի այն կողմի վրա, թե ինչպես «արտաղի, Շամախու և այլ տեղերից Բաքու հավաքված հայ «առնվեղ, պարզամիտ գյուղացին» անբարոյականանում է, Գարսկաստանից եկած մշակներից վարակվելով։»

Էմմանուելը «խստաբարո և քարասիրտ բուրժուաների» շահագործումը նկարագրելիս՝ նույնպես ազդու բառեր չի խնայում և բերում է շատ օրինակներ։

Սակայն այդ ամենը նրան այն մտքին չեն բերում, թե ինչպես պայքար կազմակերպել բանվորների շահագործման դեմ, այդ մասին որևէ միտք անգամ չի ծագում նրա ուղեղում, նրա ուշադրությունը բոլորովին այլ բանի վրա է կենտրոնացած, նրան մտահոգում են այլ խոհեր. «Բացի այդ բոլոր նյութական զրկանքներից, - գրում է նա,— մշակը իր երկրագործական, նահապետական պարզ դրությունից անցնելով քաղաքային տպականված շրջանը, ընկնելով իր համար մի նոր, անծանոթ, ավելի զորավոր տարրի մեջ, յուրացնում է քաղաքային ստորին դասակարգի բոլոր զզվելի թերությունները, նա անբարոյականանում է»։

«Նյութապես և բարոյապես» փչացած այդպիսի «շինական երիտասարդները», իհարկե, «այլևս պետք չեն իրանց ընտանիքին, հայրենիքին» և «կարող են միմիայն անբարոյականացնել իրանց գյուղը, իրանց ընտանիքը»։

«Ահա քաղաքների, մեծ առևտրական և արդյունագործական կենտրոնների ազդեցությունը նահապետական մշակ դասի վրա»,— եզրակացնում է Էմմանուելը։

[1] «Մշակ», 1880 թ., № 196, Շիրվանզադեն, «Նամակ Բաքվից»։
[2] «Մշակ», 1881 թ., № 225, Էմմանուել, «Մշակների դրությունն ապրիլով»։
[3] «Մշակ», 1881 թ., 226, Էմմանուել, «Մշակների դրությունն ապրիլով»։

Բայց այդ դեռ բոլորը չէ, նա կանգ է առնում նաև այդ ազդեցության համազգային ազետալի հետևանքների վրա. «Եթե ընդունենք ամբողջ Անդրկովկասում գտնված մշակների թիվը մոտավորապես 20—25 հազար, որոնք մեծ մասամբ հեռու են ապրում իրանց ընտանիքից, ինքն իրան հասկանալի է, թե յուրաքանչյուր տարի որքան ծնունդներ կորչում են գյուղերում, որքանով է պակասում ամբողջ հայ ազգաբնակության թիվը»։

Դրանով էլ չի վերջանում չարիքը։ Էմմանուելը հրավիրում է հայ ինտելիգենցիային մտածել նաև այն մասին, որ քաղաքային մշակների «... այդ հուզարավոր անապաստան և նյութապես անապահով ամբոխի միջից, որ օրից օր բարոյապես փչանում է, կարող են դուրս գալ ավազակներ, գողեր, մարդասպաններ». ապա դրանց մեջ «... կարող են դարգանալ ամեն տեսակ վարակիչ, տարափոխիկ հիվանդություններ, որոնք կտարածվեն քաղաքի մյուս ազգաբնակության մեջ» և որոնց դեմ պայքարելը մեծ ծախքեր կպահանջի։

Որպեսզի այդ բոլորը տեղի չունենա, թե հայ գյուղացիք չփչանան, թե հայ ազգը չպակասի և թե քաղաքի բնակիչները նշված վտանգներից և ծախքերից ազատվեն, ըստ Էմմանուելի, հարկավոր են հետևյալ միջոցառումները բանվորական հարցի լուծման համար.— նախ՝ Թիֆլիսի Բարեգործական և Բաքվի Մարդասիրական ընկերությունները պետք է հոգան հայ մշակների մասին, «տալով նրանց քիչ թե շատ մաքուր և հարմար բնակարաններ, հիմնելով արժան ճաշարաններ»։ Ապա հատուկ հանձնաժողովների միջոցով պետք է ուսումնասիրել Անդրկովկասի բանվորների դրությունը, «իմանալ նրանց մեծ քաղաքները դիմելու շարժառիթները» և «դորա համեմատ դարմանն առաջարկել, որքան հնար է արգելք դնել այն անընդհատ հոսանքին, որ տեղի է ունենում գյուղերից դեպի քաղաքները, աշխատել միջոց հայթայթել քաղաքում դետեղված այդ երկրագործ դասակարգի դեռևս առողջ անդամներին վերադառնալ կրկին իրանց գյուղը և կրկին ձեռք տալ արորին ու բահին...»։[1]

Այսպես ուրեմն, Էմմանուելը ծրագրում էր Անդրկովկասում բանվորական հարցը լուծել հայ բանվորներին բարեգործական ընկերությունների խնամակալությանը հանձնելով, քաղաքի ապականության մեջ «դեռևս առողջ» մնացած բանվորներին գյուղ վերադարձնելով և ըստ հնարավորին արգելք դնելով «այն անընդհատ հոսանքին, որ տեղի է ունենում գյուղերից դեպի քաղաքները»։ Եվ այդ բոլորը պետք է կատարվեր կապիտալիզմի անխախտ մնալու պայմաններում. կապիտալիստական արդյունաբերության, նրա դարգացման դեմ ոչ մի առարկություն չունի Էմմանուելը, նա միայն ցանկանում է հայ «անմեղ, պարզամիտ գյուղացուն» քաղաքային կյանքի անբարոյականացնող մթնոլորտից հեռու պահել, որովհետև, նրա հասկացողությամբ, գյուղացին բանվոր դառնալով՝ միայն այլասերվում է, կորչում է իր գյուղի, երկրի, ժողովրդի համար։

Ահա ե՛ն ձեզ բանվորական հարցի Էմմանուելյան լուծումը...

Այսպես էր բանվորական հարցը հասարակության ուշադրության առարկա դարձնում և դրա համար «լուծման» ուղիներ նշում «Մշակ»-ի

1 «Մշակ», 1882 թ., № 35, Էմմանուել, «Մշակների դրությունն Անդրկովկասում»։

էմմանուելը կամ, ինչպես ինքն էր ասում, «մեր բնական մարդասիրական զգացմունքները» արթնացնում բանվորների դրության նկատմամբ։

Բանվորական հարցի քննության կապակցությամբ իրրե կանոն «Մշակ»-ը առաջ չի քաշում այն խնդիրը, թե հայ գյուղացու քաղաք գնալը պետք է ըստ հնարավորին դադարեցնել կամ նույնիսկ ետ բերել գնացածներին. այս դեպքում էմմանուելը իր լիբերալ ուսուցիչներից որոշակիորեն ետ մնացած մարդ է. նրա հետամնացությունը երևան է գալիս նաև այն դեպքում, երբ նա հասարակական բարեգործության, այսինքն մի զգալի չափով հայ կապիտալիստի գրպանի հաշվին էր ծրագրում բարվոքել բանվորների դրությունը։ Նրա գաղափարական ուսուցիչը, Գրիգոր Արծրունին բանվորներին օգնելու բարեգործական սկզբունքի փոխարեն առաջ էր քաշում ինքնօգնության սկզբունքը։ Սակայն մի բանում Նրանք լիովին համերաշխ էին՝ երկու դեպքում էլ կապիտալիզմի անխախտ մնալն ինքնին հասկանալի էր համարվում, ուրեմն և բանվորների կողմից կապիտալիստական տնտեսության սիստեմի դեմ պայքար մղելու մասին խոսք անգամ չկար ինչպես աշակերտի, այնպես էլ ուսուցչի ծրագրում։

Արծրունին իր առաջնորդողներից մեկում խոսելով անհատական օգնության կամ բարեգործության և հասարակական օգնության կամ ինքնօգնության սկզբունքների մասին ընդհանրապես հասարակական կյանքում, այդ առթիվ, մասնավորապես բանվորական հարցի նկատմամբ այսպիսի դատողություններ է անում. «Մի գործարանի բանվորներ ստանում են իրանց օրական վարձը, որ հազիվ բավականացնում է իրանց և իրանց ընտանիքի մարդավայել ապրուստին։ Այդ սուդ նյութական միջոցներից ավելին նրանք սպասում են գործարանատիրոջ, կապիտալիստի օգնությունից, նրա բարեգործությունից։ Շատ գովելի է, եթե կապիտալիստը իր սեփական միջոցներով հիմնում է իր բանվորների համար բնակարաններ, հիվանդանոց, հաստատում է թոշակի արկղ, նրանց երեխաների համար դպրոց և այլն»։

Բայց, խորհուրդ է տալիս Արծրունին բանվորներին, հարկավոր չէ հույս դնել կապիտալիստի այդ «բարեգործության» վրա, որովհետև «...այդ բոլորը կախված է գործարանատիրոջ բարի կամքից, այդ բոլորը հիմնվում է բարեգործության, անհատական սկզբունքի վրա, այդ բոլորը պատահական է»։

Այսպիսի պատճառաբանությամբ մի կողմից՝ գործարանատիրոջը լիովին փրկելով «բարեգործություն» անելու տհաճ պարտականությունից, մյուս կողմից՝ բանվորներին հեռու պահելով այդ բոլորը պայքարով նվաճելու մտքից, Արծրունին բանվորներին հրամցնում է իր «ինքնօգնության» սկզբունքը, որի կենսագործման դեպքում թե կապիտալիստի գրպանն անձեռնմխելի կմնա, թե բանվորներն իրենց սեփական ջանքերով իրենց բոլոր կարիքները կհոգան հենց կապիտալիզմի պայմաններում և անգամ կապիտալիստական արտադրության եղանակն օգտագործելով և թե «անհատական» ստոր սկզբունքին փոխարինելու կգա «հասարակական» բարձր սկզբունքը։

Ըստ Արծրունու՝ այդ ամենը հնարավոր է դառնում այն ժամանակ, երբ «... բանվորների շրջանում փոքր առ փոքր զարգանում է ինքնագործունեության, ինքնօգնության գիտակցական սկզբունքը։ Եվ ահա բան-

վորների մեջ հասունանում է ընկերակցության գաղափարը. նրանք հասկանում են, որ անհատի բարի կամքից, նրա բարեգործությունից, նրա մարդասիրական զգացմունքից օգնություն սպասելը անհաստատ բան է, եվ ահա բանվորների ընկերակցությունը հիմնում է իր սեփական խնայողական արկղ. թոշակի արկղ, սպառման, վերջապես և արդյունաբերության ընկերություն... Փոքր առ փոքր անհատական սկզբունքի տեղը, որ հիմնված է բարեգործության վրա, բռնում է ընկերական սկզբունքը, որ հիմնված է ինքնօգնության վրա»[1]

Այսպիսով, հայ լիբերալների առաջնորդը՝ լիովին համերաշխ գերմանացի լիբերալ Շուլցե-Դելիչի հետ՝ եռանդով և մտածված ծրագրով հայ բանվորներին մղում էր դեպի սպառողական և արտադրողական ընկերությունների կազմակերպումը, բանվորական հարցին լուծում էր տալիս բանվորների ուշադրությունը կապիտալիզմի ստեղծած անհաշտելի հակասությունների դեմ մղվող պայքարի անհրաժեշտությունից հեռացնելով և նրանց այն գաղափարը ներշնչելով, որ ինքնօգնության խելացի սկզբունքով բանվորների բոլոր կարիքները լիովին լուծելի են հենց կապիտալիզմի շրջանակներում։

Այս մակարդակի վրա էր քննվում բանվորական հարցը «Մշակ»-ում ոչ միայն այն դեպքում, երբ խնդիրը վերտրերում էր նրա սկզբունքային դրվածքին, այլև երբ աչքի առաջ ունեին դրա հետ կապված այս կամ այն կոնկրետ պրոբլեմը։ «Մշակ»-ը. նրա հրապարակախոսները միշտ հավատարիմ էին մնում իրենց լիբերալ դավանանքին։

Այսպես, օրինակ, բանվորների կյանքի և կենցաղի այլանդակ պայմանների քննությունը նրանց առիթ էր ծառայում ոչ թե կապիտալիզմի սիստեմը մերկացնելու, այլ չարիքի աղբյուրը բանվորների մեջ որոնելու, օրինակ, հայ բանվորների ազգային հատկություններին վերագրելով նրանց վիճակի ծանրությունը։

«Մշակ»-ը 1896 թ. հրավիրում է իր աշխատակիցներին զբաղվել Անդրբկովկասի բանվորների սննդի ուսումնասիրությամբ, օրինակ ունենալով անգլիական մի պրոֆեսորի փորձը մեծ Բրիտանիայի բանվորների նկատմամբ։ Այդ կապակցությամբ թերթում հրատարակվում է Թիֆլիսի բանվորների «օրվա սննդի մասին» մի «ուսումնասիրություն», որի հեղինակը բանվորներին հետևյալ խմբերին է բաժանում՝ նրանց սննդի վիճակը բնութագրելու համար. «1. արբեցողներ, 2. սեռական զվարճության հետևողներ. 3. խաղայողներ, 4. շատակերներ, 5. մսակերներ, 6. կանոնավոր ապրողներ և 7. խնայողներ»։

Այդ «խմբավորման» հիման վրա կատարած «ուսումնասիրությունը» հոդվածագրին այսպիսի եզրակացության է բերում. «Ընդհանրապես վերցրած՝ բանվորների մեջ ավելի շատ, աննպատակ, սննդի կողմից անբավարար, մահարեր կյանք վարում են ավելի հայերը, որոնք բոլոր բանվորների մեջ կազմում են առագին մեծամասնություն։ Այդ դասակարգի մարդիկ փչացած կյանք ունենալով՝ սերնդի փոխարեն ճիվաղներ են արտադրում, որոնք թե թուլամորթ են լինում և թե շատ կարճ կյանք են ունե-

1 «Մշակ», 1888 թ. № 40. Գ. Ա., «Հարուստներից սպասենք օգնություն, թե հասարակությունից»։

նում։ Եվ ճշմարիտ որ այս տխուր հանգամանքը արժանի է մեր մամուլի լուրջ ուշադրության»[1]

Այդ «լուրջ ուշադրության» մի շարք նմուշները ոչ միայն այս կոնկրետ հարցում, այլև ընդհանրապես բանվորական հարցի նկատմամբ մենք արդեն տեսանք։

Այդ բոլորից չի կարելի չգալ այն եզրակացության, որ բանվորական հարցը քննության առնելիս՝ «Մշակ»-ի հրապարակախոսները ելակետ ունեն Անդրկովկասում զարգացող կապիտալիզմի շահերը, որի անխախտ գոյությունը և ծավալումն ինքնին հասկանալի մի իրողություն է նկատվում, իսկ այն բոլոր միջոցները, որոնցով իբր թե պետք է վերացվեր բանվորի շահագործումն իբրև սպառողի և իբրև արտադրողի, ոչ միայն համատեղելի էին համարվում կապիտալիզմի հետ, այլև ենթադրում էին ըստ էության կապիտալիստական արտադրության եղանակ նաև բանվորական ընկերությունների համար։

Այս պատճառով էլ, ինարկե, խոսք անգամ չէր լինում կապիտալի և աշխատանքի անհաշտելի հակասության, դրանց միջև տեղի ունեցող կյանքի ու ժամու պայքարի և բանվորների ռևոլուցիոն դերի մասին. ընդհակառակը. «Մշակ»-ը բանվորական հարցը քննում էր այն մակարդակի վրա, որ հայ պրոլետարիատին հեռու պահի այդ գաղափարների ազդեցություններից։ Նա՝ հավատարիմ իր լիբերալ-բուրժուական դավանանքին՝ շատ անգամ էր հանդես գալիս այն սոցիալական ուսմունքների դեմ, որոնց կողմնակիցները սոցիալիզմի տեսակետով են քննել կապիտալիզմի գրկում հասունացող դասակարգային հակասությունների հարցը, հետևաբար բոլորովին այլ ձևով են դրել ու լուծել նաև բանվորական հարցը, այդ կապելով կապիտալիզմի տապալման հետ ռևոլուցիոն ճանապարհով։

«Մշակ»-ի լիբերալ հրապարակախոսների համար անհանդուրժելի էր ամեն մի ռևոլուցիա, կապիտալիստական հասարակության վերակառուցման ամեն մի ռևոլուցիոն ուղի, և նրանք առիթ բաց չեն թողել ամենայն վճռականությամբ հանդես գալու բուրժուական հասարակական հարաբերությունների ամեն կարգի հակառակորդների դեմ՝ սկսած ռուսական ռևոլուցիոն նարոդնիկներից մինչև պրոլետարական սոցիալիզմի ներկայացուցիչները։

Կանգ առնենք հայկական լիբերալիզմի գաղափարախոսության նաև այդ կողմի վրա։

III. «ՄՇԱԿ»-Ը ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Տարիներ շարունակ, իր հրատարակության հենց առաջին օրերից սկսած, «Մշակ»-ը կտրուկ թշնամական դիրք է բռնում դեպի եվրոպական և ռուսական ռևոլուցիոն-դեմոկրատական գործիչները. ամենախիստ բառերով է բնութագրում նրանց գործունեությունը, մխտում նրանց կործանարար գաղափարները։ Մեծ կրքով են լցված «Մշակ»-ի մանավանդ այն առաջնորդողները և հոդվածները, որոնք ուղղված են ռուսական ռևոլուցիոն նարոդնիկության ու եվրոպական պրոլետարական շարժումների և սոցիալիզմի դեմ։ Ընդհանրապես օրգանական ատելություն է գղում նա դեպի այն բո-

[1] «Մշակ», 1896 թ., № 44, Ս. Նազարյանց, «Աշխատավոր դասակարգի հնությունը»։

լոր հասարակական երևույթները, որոնց մեջ տեսնում է սոցիալիզմի և կոմունիզմի «վարդապետություններին» որևէ արտահայտություն և, իհարկե, չի հապաղում վճռական պայքար ծավալել դրանց դեմ։

Իսկ, ընդհակառակը, եվրոպական բուրժուազիայի և ռուսական ցարիզմի ամենառեակցիոն պետական-քաղաքական գործիչների մասին «Մշակ»-ը մեծագույն գովեստով է խոսում հենց այն դերի կապակցությամբ, որ նրանք խաղացել են ռևոլուցիոն-դեմոկրատական և պրոլետարական շարժումների ճնշման մեջ։

Այսպես, օրինակ, «մշակ ժողովրդի» շահերի պաշտպանությունն իր հիմնական խնդիրներից մեկը համարող «Մշակ»-ը հենց իր հրատարակության առաջին տարին հետևյալ ձևով էր բնութագրում XVIII դարի վերջի ֆրանսիական ռևոլուցիայի ժողովրդական նշանավոր առաջնորդին՝ Ռոբեսպիերին. թեև նա, գրում էր թերթի աշխատակից Զաքուեը, «... կարողանում էր սրտի ուզած ժամանակը մարդկային իրավանց ամենահավատարիմ մարտիրոսը ձևացնել, բայց ինքը միևնույն ժամանակը ոտով, գլխով, ուղեղով ու իր բոլոր գործերով ամենաարյունարբու դեսպոտներիցը մինն էր»[1] (ընդգծումները հեղինակինն են, Վ. Ռ.)։

Մի քանի տարի հետո, 1877 թ. երիզոր Արծրունին ֆրանսիական պրոլետարիատի և ժողովրդի դահիճ, Գարիգի Կոմունան մասսաների արյան մեջ խեղդող Թիերի մահվան առթիվ գրած իր հոդվածումնրա պատմական վաստակներից մեկն էլ հենց այն էր համարում, որ նրան հաջողվեց ոչնչացնել Կոմունան։ Արձագանքելով պրոլետարական ռևոլուցիայի վտանգից փրկված եվրոպական բուրժուազիայի երախտագիտության զգացմունքին, Արծրունին նշում էր, թե Թիերի շնորհիվ Ֆրանսիան ազատագրվեց, «... երկրի մեջ վերականգնեցավ խաղաղությունը, որ խանգարված էր կոմունիստական սարսափելի շարժմամբ»։[2]

Արծրունին այդքանով չի բավականանում և շարունակելով իր ներբողը, հետևյալ խորհրդածություններն է անում. նա XIX դարի հատուկ նվաճումն է համարում այն իրողությունը, որ Թիերի նման մեծ մարդիկ իրավացիորեն գնահատվում են դեռևս իրենց կենդանության ժամանակ. «Այն ահագին ժողովրդականությունը, որ վայելում էր Թիերը, ոչ թե միայն իր հայրենիքում՝ Ֆրանսիայում, բայց և ամբողջ Եվրոպայում, այն տրտմության և խոր ցավի աղմուկը, որ գցեց ամբողջ լուսավորված աշխարհը երևելի գիտնականի, գրողի, պատմաբանի և պետական մարդու մահվան լուրը լսելով, այն լուռ, անասելի վեհ համակրական զգացմունքը, որ ուղեկից եղավ անշունչ դարձած երևելի մարդուն նորա թաղման հանգիստին, որին կարծես հանդիսատես և մասնակից էր ոչ թե միայն Ֆրանսիան, բայց և ամբողջ քաղաքակիրթ մարդկությունը,--մեր ժամանակի, XIX դարի նշանն է»։[3]

Այսպես ուրեմն, բուրժուազիայի ամենաարյունռաձիրներից մեկի անարգ հերոսը, Մարքսի ասած գազրելի գաճաճը եվրոպական բուրժուական հասարակության հետ միասին հայ լիբերալների առաջնորդի աչքում էլ մի

1 «Մշակ», 1872 թ., № 48, Զամուն, «Ֆելիեռան»։
2 «Մշակ», 1877 թ., № 62, Գ. Ա., «Լուի Ադոլֆ Թիեր»։
3 «Մշակ», 1877 թ., № 66, Գ. Ա., «Անցյալը և ներկան»։

հակա էր դառնում. արժանի խոր երախտագիտության և հաժերաշխ ժեծարանքի ամբողջ «լուսավորված աշխարհի» կողմից։

«Մշակ»-ի հրապարակախոսները հետագա տարիներում էլ առիթ բաց չեն թողնում իրենց թշնամանքը երևան բերելու դեպի Գարիգի Կոմունայի հերոսները, անողոք դատավորի դիրք ընդունելով և՝ հանուն Եվրոպայի բուրժուական հասարակական հարաբերությունների պաշտպանության՝ ողջունելով ֆրանսիական պատգամավորների պալատի որոշումը կոմունարներին ընդհանուր ներում չտալու մասին։

«Եվրոպան չէր կարող հաշտվել Ֆրանսիայում վերջնականապես հաստատված կառավարչական ձևի հետ (այսինքն ռեսպուբլիկայի հետ։ Վ. Ի.), եթե Ֆրանսիան ներեր այն մարդկերանց, որոնք իրանց գործը ոչ թե միայն սխալմունք չեն համարում, այլ գովում են նրան և սպառնում են վրեժխնդիր լինել իրանց պատժվելու պատճառով»,— գրում էր Վ. Տ.-ն թերթի առաջնորդողներից մեկում։

Նշելով այն հանգամանքը, որ ընդհանուր ներման նախագիծը տապալվեց և ընդունվեց ֆրանսիական կառավարության առաջարկը, այն է՝ «... ներել կոմունիստների հանցանքը, վերադարձնել նրանց բոլորին աքսորից, բացի 1200 մարդուց»,— Վ. Տ.-ն գոհունակությամբ արձանագրում է. «Ֆրանսիական մինիստրությունը հաղթող հանդիսացավ. և այդ հանգամանքը ուրախացրեց այդ պետության բոլոր բարեկամներին»։[1]

Այդ բարեկամների մեջ էին, ինչպես տեսնում ենք, հայ լիբերալները, որոնք ֆրանսիական ու եվրոպական բուրժուական ռեակցիայի հետ էին ընդդեմ անհաշտ ու վրեժխնդրությամբ լի հերոսական կոմունարների։

* *

70-ական և 80-ական թվականների ռուսական հասարակական-քաղաքական կյանքը շատ առիթներ էր տալիս «Մշակ»-ի դեկավարներին իրենց տեղը որոշելու ռևոլուցիայի և ռեակցիայի պայքարող ուժերի միջև։ Բնտրկե, առանց որևէ տատանման, այս դեպքում էլ հայ լիբերալներն իրենց ռուս գաղափարակիցների հետ միասին ցարական ռեակցիայի հետ էին ընդդեմ ռուսական ռևոլուցիոն դեմոկրատական շարժման։

Հայ լիբերալների ոարսավոր ռևոլուցիայից և ատելությունը դեպի ամեն մի սոցիալական-ռևոլուցիոն շարժում հատկապես ցայտուն կերպով արտահայտվեցին այն խիզախ մենամարտի շրջանում, որ նարոդնիկական կազմակերպություններն սկսել էին ցարիզմի դեմ։ Այդ առթիվ «Մշակ»-ը խոսք չէր գտնում մերկացնելու և անարգանքի մատնելու այն կործանարար սոցիալական ուսմունքները, որոնց հետ կապված էր համարում նարոդնիկական շարժումը։

1879 թ. ապրիլի 2-ի Ալ. Սոլովյովի մահափորձը Ալեքսանդր II-ի վրա Գրիգոր Արծրունուն առիթ է տալիս այսպիսի խորհրդածություններ նվիրվել Ռուսաստանում գոյություն ունեցող «մի սարսափելի, մի վտանգավոր ոարբերկրյա» շարժման մասին. «Այն եղեռնագործությունները, որոնք վերջին ժամանակները կատարվում են ամբողջ Ռուսաստանում բարձր պաշ-

[1] «Մշակ», 1879 թ., Վ. Տ., «Ֆրանսիան վերջին անցքերը» առաջնորդող։

տոնյաների և կայսրի ամենամոտ օգնականների դեմ, այն հանցանքները, որոնցից վերջինը ուղղված էր նույնիսկ կայսրի անձնավորության դեմ, չեն կարող համարվել երկու-երեք մարդի խանգարված ուղեղի ծնունդ, այլ այդ սարսափելի չարագործությունների անլսելի հաջորդությունը ցույց է տալիս, որ կա ռուսաց հասարակության մեջ... մի սարսափելի, մի վտանգավոր ստորերկրյա շարժում, որ խոր արմատներ է գցել ռուսաց հողի մեջ»։

Այսպիսի եզրակացության գալով այդ շարժման մասին, նա նշում է նաև դրա դեմ պայքարելու միակ հուսալի ուղին, այն է՝ հասարակության, այսինքն բուրժուազիայի, և պետության գործակցությունը չարիքն արմատախիլ անելու համար, քանի որ չարիքն ինքը լայն հասարակական բնույթ է ստացել։ Իսկ այս նշանակում է, որ հայ լիբերալների առաջնորդը հետևում էր նույն քաղաքական վարքագծին, ինչ որ ռուս լիբերալները, այն է՝ ցարիզմի հետ ընդդեմ ռևոլուցիայի, ընդդեմ տիրող կարգի ամեն տեսակի թշնամիների։

«Անվանեցեք սոցիալիզմ, անվանեցեք միջազգային հեղափոխական-կուսակցություն, անվանեցեք անարխիական, անիշխանական կուսակցություն,—գրում էր Արծրունին,—միևնույն է՝ ինչ անուն տաք այդ ուղղության մարդիկներին... միայն մի բան հերքել չէ կարելի՝ կան ցավեր, հասարակական ախտեր, որոնք տերությունը միայն հասարակության գործակցությամբ կարող է արմատից հանել»։

Արծրունին ոչ միայն հասարակության գործակցությունն է խոստանում ցարիզմին սոցիալիզմի, ռևոլուցիայի հետ կապված «ցավերը, հասարակական ախտերը» ոչնչացնելու համար, այլև Անդրկովկասի ժողովուրդների, մասնավորապես հայերի լիակատար անմեղսակցությունը շեշտում այն պայքարին, որ բուն Ռուսաստանում ծավալված էր կառավարության դեմ։ Եվ այդ այն պատճառով, պնդում է Արծրունին, որ անդրկովկասցիներին, «մանավանդ սաստիկ պահպանողական, կոնսերվատիվ հայոց» ազգին խորթ են Ռուսաստանը հուզող այդ ուսմունքները, «... մեր բնավորության հակառակ է սոցիալիզմի որևէ գաղափարը, մեզ անհասկանալի են այդ երազական մտքերը։ Անդրկովկասը երբեք չի ներկայացնի մի հարմար հող սոցիալական որևէ պրոպագանդայի համար»։

Անդրկովկասն ունի իր հատուկ խնդիրները, որ ըստ Արծրունու հետևյալ խղճուկ շրջանակներում են ամփոփվում. «Մենք ունենք մեր սեփական, ներքին խնդիրներ, մեր տնտեսական և ուսումնարանական ցավեր։ Սոցիալիզմը հակառակ է մեր բնավորության, և մենք պետք է մեր բոլոր ջանքերը գործ դնենք մեր անդրկովկասյան ազգությունների՝ հայերի, թուրքերի և վրացիների ինքնակրթության գործը առաջ տանելու»։

Այսպիսով՝ Անդրկովկասի ժողովուրդներին խնամքով ջանալով հեռու պահել ողջ Ռուսաստանը հուզող համապետական ռևոլուցիոն, սոցիալ-քաղաքական շարժումներից, նրանց հրամցնելով միայն իրենց «ինքնակրթության գործը առաջ տանելու» խնդիրը, Գրիգոր Արծրունին չի մոռանում նաև նրանց հրավեր կարդալ, որ իրենց լոյալ քաղաքացու պարտքը սրբությամբ կատարեն ցարիզմի հանդեպ։

«Ուրեմն,—վերջացնում է նա իր բոլոր դիտողությունները վերևում մեր քննության ենթակա հարցի մասին,—ամփոփենք մեր ուժերը մեր

սեփական հոգսերի վրա, դատապարտելով միշտ ապօրինի և հակահասարակական արարմունքները»։[1]

Այդ «սեփական հոգսերի» մասին գրելիս էլ նա չի մոռանում անաղարա պահպանել հայի «սաստիկ պահպանողական կոնսերվատիվ» բնավորությունը և պայքարել այն բանի դեմ, որ, օրինակ, հայերի «ուսումնարանական» գործում, նրանց նոր սերնդի կրթության մեջ մուտք չգործեն հայի բնավորությանը հակառակ իդեանները, հայկական դպրոցը հեռու մնա սոցիալիզմի ու կոմունիզմի կործանարար գաղափարների ազդեցությունից։

Ելակետ ունենալով այդ հանգամանքը՝ Արծրունին վճռականորեն առարկում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում հունարեն և լատիներեն դասավանդելու մտադրության դեմ այսպիսի, մեղմ ասած, ծիծաղաշարժ պատճառաբանությամբ.

«Բայց աստված ազատի մեզ և մեր նոր սերունդը սովորել լատիներենը և հունարենը՝ հին հռոմեական և հունական հեղինակների հնացած, անբարոյական, ֆնասակար, հակահասարակական մտքերը, կործանիչ քաղաքական գաղափարներն ընդունելու համար։ Դեռ յոթ տարի սրանից առաջ մենք ապացուցինք «Մշակ»-ի մեջ, որ ժամանակակից սոցիալիզմը և կոմունիզմը իրանց սկզբունքները առել են հին կլասիկային գրականությունից, հին կլասիկային աշխարհից»։[2]

Հունարենի և լատիներենի դասավանդումը հայկական դպրոցում մերժելով և դրա մեջ ապահովություն որոնելով անտիկ աշխարհի և այժմյան սոցիալիստական-կոմունիստական գաղափարների դեմ, Արծրունին մի այլ ավելի մեծ միջոցառումով՝ Անդրկովկասում համալսարան բաց անելու ծրագիրը պաշտպանելով, մտածում էր երաշխիք ստեղծել, որով կարելի կլիներ երկրի երիտասարդությանը Ռուսաստանի համալսարաններում տարածված «սոցիալիստների անմիտ գաղափարներով» վարակելու վտանգից փրկել։

«Ռուսաստանում վերջին ժամանակները տարուց տարի ավելի սկսում են տարածվել զանազան ֆնասակար և վտանգավոր երազական վարդապետություններ»,— գրում է այդ առիթով Արծրունին։ Դրանք հատկապես նպաստավոր հող են գտնում ռուսական բարձրագույն դպրոցների երիտասարդության մեջ։

Արծրունուն թեև թվում է, որ «ռուս սոցիալիստների և նիհիլիստների ցնորաբանությունները» կովկասցու, մանավանդ անդրկովկասցու բնավորությանը բոլորովին խորթ են, «բայց մեր երիտասարդությունը,—մտահոգված շարունակում է նա,—ընկնելով Մոսկվայի, Ս. Պետերբուրգի, Կիևի կամ Խարկովի ռուս շրջանները, շատ հեշտությամբ կարող է վարակվել սոցիալիստների անմիտ գաղափարներով։ Եթե շատերը մեր երիտասարդներից վերադառնում են չվարակված, դորանով մենք պարտական ենք մեր պահպանողական բնավորությանը...»։

Ուստի, հղրակացնում է նա, վարակման ամեն մի հնարավորություն կանխելու նպատակով անհրաժեշտ է Անդրկովկասի երիտասարդության հա-

[1] «Մշակ», 1879 թ., № 48, Գ. Ա., «Ո՞ւր ենք գնում» առաջնորդող։
[2] «Մշակ», 1879 թ., № 117, Գ. Ա., «Մենք համամայն չենք» առաջնորդող։

մար Թիֆլիսում համալսարան բաց անել և այդպիսով նրան կտրե ռուսական ուսանողական միջավայրի վտանգավոր ազդեցությունից։[1]

Ահա այսպիսի դնով էր փորձում հայ լիբերալների առաջնորդը Անդրկովկասի ժողովուրդների համար համալսարան բանալու բարեհաճություն մուրալ ցարիզմից։

Արծրունին առիթ է ունենում դրելու նաև այն մասին, թե ինչպես պետք է վերակառուցել համալսարանական կրթությունը հենց լուն Ռուսաստանում, որ այնտեղ էլ համալսարանները չդառնան «փնասակար հասարակական վարդապետություններ» տարածելու հիմնական աղբյուր։ Այդ առիթը տալիս են այն երկու կոչը, որ 1878 թ. Ալեքսանդր II-ը ուղղել էր Ռուսական հասարակությանը, այսինքն բուրժուազիային, որ, ինչպես գրում է «Մշակ»-ը, նա աջակցե կառավարությանը արմատախիլ անելու «վերջին ժամանակները Ռուսաստանում տարածվող հասարակական փնասակար վարդապետությունը», ապա ուղղել էր ուսանող երիտասարդությանը, «հրավիրելով նրան խղճմտաբար վերաբերվել դեպի գիտությունը»։

Ահա այդ կապակցությամբ «Մշակ»-ում Արծրունին հետևյալ մտքերն է արծարծում. «Ճավելով պետք է ասենք, որ եթե Ռուսաստանում վերջին ժամանակները կարողացան այդքան հաջողությամբ տարածվել և խոր արմատներ դցել դանազան սուտ և փնասակար հասարակական վարդապետություններ. դորա մեջ գլխավորապես մեղավոր են մեր համալսարանները, կամ, ավելի լավ է ասել, համալսարանական գիտությունը»։ Վերջինիս որակն ընկել է. նշում է Արծրունին և ափսոսանքով արձանագրում, թե «այժմ ուր են Դրանովսկու, Գուդրյավցեվի և ուրիշների պես պրոֆեսորներ . . .»։

Անցյալ դարի 40-ական թվականների ռուսական արևմտականների աջ թևին հարող, այսինքն ռևոլուցիայից ու ռևոլուցիոն պայքարից հեռու գտնվող այդ նշանավոր գիտնականների անունների հիշատակումը պարզորեն գաղափար է տալիս մեզ այն մասին, թե ինչ ուղղությամբ էր պատկերացնում Արծրունին «համալսարանական գիտության» բարձրացումը։ Ակներև է, որ ռուսական ուսանողությունը պետք է կրթվեր Արևմուտքի բուրժուական հասարակության ու գիտության ոգով և միայն այդ դեպքում նա իդեապես ապահովված կլիներ «դանազան սուտ և փնասակար հասարակական վարդապետություններից», ինչպես արտահայտվում էր «Մշակ»-ի խմբագիրը։

Իսկ ռուսական համալսարաններում, ինչպես հայտնի է, հենց այդպիսի կրթության հնարավորությունը չկար, քանի որ 1866 թվականից լուսավորության մինիստր նշանակված կոմս Դ. Ա. Տոլստոյը դրեթե ոչնչացրել էր 60-ական թվականների առաջին կիսի շատ համեստ լիբերալ ռեֆորմները լուսավորության ասպարեզում և մասնավորապես միջնակարգ ու բարձրագույն կրթության գործում վերականգնել էր դասային սկզբունքը հօգուտ ազնվականության և ի փնաս բուրժուազիայի ու մյուս շերտերի։

Ակնարկելով այդ ամենը՝ Արծրունին գանգատվում է, որ դիմնազիա և համալսարան մտնելը դժվարացել է և թերուս երիտասարդները «...անդործ թափառում են՝ հասարակական ոչ մի գործ չդտնելով»։ Ապա նա

[1] «Մշակ», 1879 թ. № 34, Գ. Ռ. «Համալսարանը հարկավոր է» առաջնորդող։

ուշադրություն է հրավիրում դրա հետևանքների վրա. «Իսկ սուտ և ֆասակար վարդապետությունները այս տեսակների մեջ են գտնում մեծ մասամբ ջերմ կուսակիցներ...»։

Այսպես դգուշությամբ նշելով ցարական կառավարության լուսավորության ասպարեզում վարած ռեակցիոն գծի անմիջական ազդեցությունը երիտասարդության մեջ ռևոլուցիոն տրամադրություններ ծավալելու գործում, Արծրունին գնում է Ալեքսանդր II-ի թագավորության առաջին տարիների «լիբերալ» կուրսին վերադառնալու խնդիրը։

Պետք է դիմեագիաների և համալսարանների դռները բանալ երիտասարդության առաջ և ճշմարիտ ուսմամբ ու գիտությամբ նրան հեռու պահել ռևոլուցիայի ուղուց, որովհետև, պնդում է նա, «Սուտ և ֆասակար վարդապետությանը կարող են հաղթել միմիայն ճշմարիտ ուսումը և ճշմարիտ գիտությունը։ Միայն լույսը կարող է հաղթել խավարը»։[1]

Ուշադրության արժանի է ոչ միայն այն հանգամանքը, որ Արծրունին խիստ մակերեսային բացատրություն էր տալիս Ռուսաստանի 70-ական թվականների նարոդնիկական ամբողջ շարժմանը, մի խոսք անգամ չէր թողնում դրա տնտեսական-հասարակական հիմքերի մասին և միայն պատրաստվում էր իր լիբերալ-բուրժուական գիտության լույսով ցրել այդ խավարը, այլև այն, որ հայ լիբերալների առաջնորդը 1878 թ. ի պատասխան ցարի կոչերի՝ ռուս լիբերալների նման՝ ցարիզմին խոստանում էր ամեն աջակցություն «սուտ և ֆասակար վարդապետությունների» դեմ մղվող պայքարում, միայն նրանից մուրալով դրա փոխարեն մի գիջում, այն է՝ վերազարձ դեպի 50-ական թվականների վերջերի և 60-ական թվականների սկզբների լիբերալ կուրսը մասնավորապես լուսավորության ասպարեզում, այն էլ իբրև դենք ռևոլուցիայի դեմ օգտագործելու համար։

Արծրունին չէր էլ ակնարկում որևէ քաղաքական բնույթի գիջում, որի մասին այս կամ այն ձևով, հենց նույն առիթն օգտագործելով գրում էին ռուս լիբերալներից ոմանք, սահմանադրության նման մի բան մուրալով ցարիզմից, ինարկի. ռևոլուցիայի դեմ պայքարելու ամեն պատրաստականություն երևան բերելով դրա փոխարեն։

Հասկանալի են հայ լիբերալների առաջնորդի այդ քաղաքական չափավորության պատճառները։ Հիշեցնենք, օրինակ, գլխավորներից մեկը՝ այն հույսերը, որ Արծրունին մասնավորապես հենց այդ մոմենտում դնում էր ցարիզմի վրա թուրքահայերի ազատագրության գործում, իսկ այդ նրան դրդում էր գրեթե ամեն ինչ զոհաբերել այդ նպատակի համար և ներքին քաղաքականության հարցերում հայերի լիակատար լոյալության հանգամանքը չեշտել ցարական կառավարության նկատմամբ։

Սակայն անկախ այդ կարևոր հանգամանքից, ինչպես պարզ երևում է վերևի ամբողջ ասածներից, ակներև է «Մշակ»-ի խմբագրի օրգանական ատելությունը դեպի ռևոլուցիոն սոցիալական ամեն մի շարժում, դեպի սոցիալիստական-կոմունիստական ամեն մի ուսմունք և դրանց դեմ պայքարելու գործում նա պատրաստ է՝ ռուս լիբերալների նման՝ ձեռք մեկնել ցարիզմին, նրան հուսալի միջոց ցույց տալ դրանց դեմ, իսկ այդ միջոցը հասարակությանն, այսինքն բուրժուազիային այս կամ այն չափով գիջում-

1 «Մշակ», 1878 թ., № 152. Գ. Ա., «Միակ միջոցը՝ առաջնորդը»։

ներ անելը պետք է լիներ, որով հնարավոր կդառնար իսկական գործակցություն ընդհանուր թշնամու՝ ռևոլուցիայի և սոցիալիզմի դեմ։

Ցարիզմից բոլորովին հաժեստ, ավելի ճիշտ խղճուկ գիջումներ հայոց Արծրունին իր լիբերալ-բուրժուական ամբողջ բաղձանքները լրիվ ծավալով հանդես է բերում, երբ առիթ է ունենում գրելու Արևմուտքում, օրինակ՝ Գերմանիայում ծավալված սոցիալիստական ուսմունքների դեմ պայքարելու միջոցների մասին։

1878 թ., երբ Բիսմարկը Գերմանիայում «բացառիկ օրենքներ» անցկացրեց սոցիալիստների դեմ և ռեակցիոն վայրագ միջոցներով ձգնում էր խեղդել սոցիալ-դեմոկրատական շարժումը երկրում, Արծրունին՝ անդրադառնալով «երկաթե կանցլերի» այդ միջոցառումներին՝ նշում էր, որ դրանք բավական չեն սոցիալիզմը Գերմանիայում արմատախիլ անելու համար. նա պաշտպանում էր այն միտքը, որ միայն բուրժուական քաղաքական ազատությունների լիակատար կենսագործման պայմաններում կարելի է հաջող պայքար կազմակերպել սոցիալ-դեմոկրատիայի դեմ, ուրիշ խոսքով՝ դնում էր այն հարցը, որ Բիսմարկի յունկերական կառավարությունը գործի ոչ միայն իր բիրտ մեթոդներով, այլև լիբերալ բուրժուազիային հնարավորություն տա մասնակցություն ունենալու երկրի քաղաքական-հասարակական կյանքի տնօրինման գործին, բուրժուական դեմոկրատիայի մեթոդներով պայքարելով սոցիալիզմի տարածման դեմ։

Արծրունին իր դատողությունները եզրափակում էր այն բանով, որ «...միայն քաղաքական կատարյալ ազատության միջոցով կարելի է վերջնական մահվան հարված տալ այնպիսի սխալ, վնասակար և հակահասարակական վարդապետություններին, ինչպիսին է սոցիալիստների սպառնալի վարդապետությունը»[1]։

Մենք արդեն վերևում նշեցինք, որ ռուսական լիբերալներից ոմանք, ճիշտ է, ավելի հաժեստ մասշտաբով, նույնն էին հասկացնում ռուսական ցարական կառավարությանը, նրանից սահմանադրության նման մի բան մուրում, ուրիշ խոսքով՝ երկրի քաղաքական բախտի տնօրինմանը մասնակցելու հնարավորություն՝ նախ և առաջ հենց սոցիալիզմի դեմ հաջող պայքար կազմակերպելու համար։ Արծրունին այդ նույն միտքը պաշտպանում էր Գերմանիայի օրինակը աչքի առաջ ունենալով։

Նկատի ունենալով այն ամենը, ինչ որ քննության առնվեց վերևում, կարող ենք լիովին համաձայնել այն գնահատականի հետ, որ 1898 թ. «Մշակ»-ը տալիս էր իր քաղաքական-հասարակական ուղղությանն իր 26-ամյա գոյության ընթացքում, առիթ ունենալով ռուսական լիբերալների „Русские Ведомости" թերթի «35-ամյա շիտակ գործունեությունը»։

«Մշակ»-ը «... իր 26 տարվա գոյության ընթացքում գնացել է նույն շավղով և աշխատել է, որքան միջոցները ներում են, իրագործել նույն նպատակները հայոց հասարակության մեջ...», — գրում էր խմբագրությունը։

Ահա այդ «շավիղն» ու «նպատակները» ըստ «Մշակ»-ի։

«Ժողովրդական մասսայի խաղաղ, հաջորդական, բայց տոկուն զարգացումը, նրա բարեկեցությունը և լուսավորությունը, նրա տնտեսական և հոգևոր վիճակի բարգավաճումը, առողջ և արդյունավետ ինքնագործունեու-

1 «Մշակ», 1878 թ., № 98, Դ. Ա. «Գերմանիայի սոցիալ-դեմոկրատները» առաջնորդողը։

թյուն, օրինականության հաստատությունը, կրթության տարածումը, կուլտուրայի պրոդրեսը այդ խոսքի լայն մտքով՝ կառավարության և հասարակության միահամուռ ջանքերով,—ահա այն նպատակները, որոնք թեև մի քանիսի կողմից համարվում են «դատարկ վարդապետություններ», բայց մնում են միշտ կենդանի և պտղաբեր»։

Այդ խիստ չափավոր լիբերալ ծրագիրը «Մշակ»-ը իրավացիորեն կապում է 60-ական թվականների «լուսատու ռեֆորմների» հետ. ինչպես արտահայտվում է նա. «Յուրաքանչյուր դրագետին հայտնի է, որ 60-ական թվականները ռուսաց փառքն ու պարծանքն են կազմում։ Այն ժամանակ ստեղծվեցին այն լուսատու ռեֆորմները, որոնց այժմ վայելում է ամբողջ Ռուսաստանը...»[1]

Սակայն հայտնի է, որ ցարական այդ ռեֆորմները, որոնց բուրժուական բնույթը ճանաչում և ռուսական լիբերալների նման դրանց դովքն է կարդում «Մշակ»-ը, լիովին տարբեր գնահատականի են արժանացել ռևոլուցիոն-դեմոկրատական և սոցիալիստական ուսմունքների հետևորդների կողմից։ Հայտնի է նաև, որ այդ բուրժուական պոստ ռեֆորմների ինչպես 60-ական թվականների, այնպես էլ հետագա տասնամյակների ամեն կարգի լիբերալ ֆատագոֆների քաղաքական գործարքը, կամ դրա փորձը ցարիզմի հետ ժողովրդական մասսաների հաշվին շարունակ արժանի հակատարված և պատշաճ գնահատական են ստացել «Մշակ»-ի ակնարկած «մի քանիսի կողմից»։

Հայկական լիբերալների օրգանն իր գոյության հենց առաջին օրերից սկսած՝ մեր քննության ենթակա ամբողջ ժամանակաշրջանում, այսինքն մինչև XIX դարի վերջը շատ որոշակի թշնամական դիրք գրավեց դեպի այդ «մի քանիսի», այն է՝ դեպի ռևոլուցիոն-դեմոկրատական, ապա նաև դեպի սոցիալիստական հոսանքների ուսմունքն ու գործունեությունը և ռուսական լիբերալների հետ համերաշխ ու միասիրտ՝ պաշտպան կանգնեց երկրի տնտեսական, քաղաքական, հասարակական «խաղաղ, հաջորդական» զարգացմանը, որ նա հնարավոր էր համարում «կառավարության և հասարակության (կարդա բուրժուազիայի։ Վ. Ռ.) միահամուռ ջանքերով», այսինքն քարոզում էր ցարիզմի ու բուրժուազիայի համերաշխ գործակցություն ռևոլուցիայի ու սոցիալիզմի դեմ։

Վ. Ռշտունի

Из истории армянского либерализма

(Р Е З Ю М Е)

В этой работе автор изучает, в рамках последней трети XIX века, некоторые основные черты социально-экономических взглядов армянских либералов, сгруппировавшихся вокруг газеты „Мшак" („Работник") Григора Арцруни.

В первой главе („„Мшак"—поборник капиталистического развития в Закавказье") рассматривается пропаганда, развёрнутая газетой

[1] «Մշակ», 1898 թ., № 173. «33-ամյա շրջան գործունեություն» խմբագրական հոդվածը։

за необходимость немедленной организации в Закавказье крупной промышленности армянскими купцами и капиталистами для разработки природных богатств и продуктов сельского хозяйства и садоводства края.

В этой связи публицисты „Мшак"-а указывали на реальную опасность, угрожавшую им со стороны иностранного капитала, который уже завладел бакинской нефтяной промышленностью и поставил под угрозу и другие отрасли производства в Закавказье.

У армянских капиталистов единственный выход из создавшегося положения состоял в том, чтобы объединиться в акционерные общества и свои капиталы из области торговли перевести в область промышленности.

В складывавшихся экономических условиях для мелких производителей города и деревни: для ремесленников и крестьян—выход также был в том, чтобы они, организуя товарищества, стали на путь крупного производства, иначе их ждал гибель, они не выдержали-бы конкуренции сильного противника.

Следовательно, вне капитализма не было спасения; поэтому армянские либералы энергично и последовательно боролись за его победу, с удовлетворением отмечая всякие его успехи в Закавказье.

Арцруни и его соратники подчеркивают и тот радостный факт, что в Закавказье только у армян имеется класс, который в состоянии возглавить экономическое и культурное развитие нации в капиталистическом направлении; это—„средний класс" или „среднее сословие", как называет буржуазию Арцруни вслед за французским буржуазным историком Минье.

„Средний класс", утверждает он, „во всех странах, во все века истории человечества был источником прогресса общества"; такую же роль он должен играть и в жизни армян, сгруппировав вокруг себя все культурные силы нации, или, как выражается Арцруни, „в нём вмещается вся наша умственная и материальная сила".

Таким образом, „Мшак" выступал в качестве передового поборника торжества капитализма в Закавказье, идейно подготовлял его победу, пропагандировал весь катехизис либерально-буржуазных взглядов, тесно связанных с возникновением и развитием буржуазных общественно-экономических отношений в Закавказье, явно отражающих интересы развивающегося промышленного капитализма.

С развитием капитализма в Закавказье, с конца 70-х годов, привлёк к себе внимание рабочий вопрос. Публицисты „Мшак"-а не могли игнорировать его существование и по-своему взялись за его разрешение. Их взгляды рассматриваются во второй главе работы („„Мшак" о рабочем вопросе").

Все, что написано в „Мшак"-е о рабочем вопросе в указанный выше период, т. е. в последней трети прошлого столетия, явно доказывает либерально-буржуазную сущность позиции этой газеты; все авторы, пишущие об этом вопросе, считают его разрешимым в рам-

ках незыблемости капиталистического способа производства. О непримиримости интересов рабочего и капиталиста, о неизбежности борьбы между ними не на жизнь, а на смерть, конечно, нет и речи. Рабочая масса рассматривается как толпа несчастных, обездоленных, страшно эксплоатирующихся, физически и нравственно разлагающихся людей, нуждающихся или в благотворительной помощи, или даже в возвращении в деревню.

Самое лучшее, что рекомендуют публицисты „Мшак"-а рабочим для улучшения своего положения, это—самопомощь посредством организации потребительных и производительных товариществ в духе немецкого либерала Шульце-Делича. Этой мерой, как они уверены, рабочий вопрос получает своё разрешение: рабочий и как потребитель, и как производитель освобождается от эксплоатации и гнёта капитала.

Таким образом, мирно разрешаются все противоречия между трудом и капиталом, становится возможным их примирение на основе сохранения капиталистического способа производства в неприкосновенности, капиталисты освобождаются от всяких претензий рабочих по улучшению их быта и материального положения, а рабочие, оставляя в покое своих хозяев, сами в рамках капитализма получают возможность удовлетворять все свои потребности.

Но мирному и гладкому осуществлению этой либеральной идиллии мешают вредные учения и революционная деятельность социалистов и коммунистов, которые втягивают в путь революционного движения рабочих и интеллигенцию. Поэтому понятна та органическая ненависть, которую питают армянские либералы ко всяким революционно-демократическим движениям вообще, а в частности к социалистическим и коммунистическим учениям и к революционной деятельности пролетариата, направленной против основ капитализма.

Все эти вопросы освещаются в третьей главе работы („Мшак" против революции и социализма").

Резко отрицательно отношение „Мшак"-а, например, к якобинцам, к их знаменитому вождю Робеспьеру, который характеризуется как „один из самых кровавых деспотов". Наоборот, палач Парижской коммуны Тьер прославляется им именно за подавление Коммуны как освободитель Франции от „страшного коммунистического движения", как спаситель европейской культуры, за что он заслуженно ценится во всём культурном мире как один из великих людей современности. Одновременно „Мшак" с чувством удовлетворения констатирует факт, что в 1879 г. французская палата депутатов считала необходимым принять только частичную амнистию по отношению к участникам Коммуны, и 1200 человек из них должны были продолжать нести вполне заслуженную кару.

Глубоко ненавистно „Мшак"-у также революционное народническое движение России 70-х годов, и он предлагает ряд мер для обеспечения учащейся молодежи Закавказья и России от пагубного

влияния социалистических идей и для подавления революционного движения.

Армянские либералы, подобно русским либералам, обещают полную поддержку царизму в его борьбе против „вредных общественных учений", намекая только на необходимость некоторых уступок обществу, т. е. буржуазии.

О характере и содержании этих уступок редактор „Мшак"-а Арцруни откровенно говорит не прямо, а только косвенно, приводя в пример опыт Германии. Оценивая насильственные меры Бисмарка против социал-демократов, он приходит к тому выводу, что все эти меры недостаточны для выкорчевывания вредного учения социалистов; против социализма, указывает он, можно с успехом бороться только посредством полной политической свободы в стране, т. е. мерами буржуазной демократии.

Ясны политические упования лидера армянских либералов; он, подобно некоторым „левым" группам русских либералов, мечтает о политических свободах для российской буржуазии, о некоторых уступках буржуазии со стороны царизма с целью совместной успешной борьбы против их общего врага, против революционного движения и социализма в России.